

Редакционная коллегия

Подписано к печати 3/IV 1942 г.

Объем 4³/₄ п. л. П. л. 46.800 уч.-авт. зн. и 51.500 печ. зн.

Тираж 400. ВФ 1895. Заказ № 50.

Типография ХОЗО НКВД Арм. ССР, ул. Ленина, № 67.

Պրոֆ. Հ. Գյուլի-Բեկխյան

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄՈՏ

Հայ պատմության ամենակարևոր շրջաններից մեկում ծավալեց խաչատուր Աբովյանն իր գրական ստեղծագործությունը և մանկավարժական գործունեությունը։ Այդ այն տարիներին էր, երբ ռուսական տիրապետությունը նոր էին պատմության գերկը նետվել հայ ժողովրդի մասնայական կոտորածները, մերկապարանոց կողոպուտն ու բռնաբարությունը, երբ հայ ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ էին պարսկական լծի դաժան պայմանները, երբ նրա ականջին դեռ հնչում էին անցած օրերի սարգարան, խանական խժոժությունների՝ օգնության կանչող զոհերի աղեկտուր ձայները։ Այդ տարիներին սկսվեց կովկասահայ ժողովրդի ընդգրկումը համառուսական հասարակական-տնտեսական կյանքի ոլորտի մեջ, նրա պատմական վիճակի՝ անխզելի կապերով միացումը ռուս մեծ ժողովրդի պատմական քախտի հետ։ Այդ ժամանակաշրջանում էր, որ անդրկովկասյան հասարակական նոր փոխարարությունների առաջացման նախադրյալների ֆոնի վրա գծագրվում էին պատմական անհրաժեշտություններ տեղի ունեցող հայ ազգության կազմավորման շրջանակները։ Պատմական այս իրադարձություն մեջ հայ հասարակական միտքը, հայ գրականությունն ստանում էին նոր ազդեցություն, արտահայտում նոր բովանդակություն, խմբվում ու հասունանում էին նոր խնդիրներ, ձևավորվում նոր գաղափարներ, վերագնահատվում էին պատմական անցյալի արժեքները, առաջադրվում ուղենիշերի փոփոխում։

Իդեոլոգիայի բնագավառում տեղի ունեցող փոփոխություններն իրենց վրա չէին կրում հախուռն թավով դրսևորված քննադատության կնիք, բարձր չէր հասարակական գործունեության որակը—չափազանց փոքրաթիվ էին այն մարդիկ, որոնք ձգտում էին ըմբռնել հայ ժողովրդի նոր պահանջները և աշխատում՝ ձևակերպել նրա պայքարի ազդանշանները։ Հետևողական չէին իրենց աշխարհայացքի մեջ, հանդուգն չէին գաղափարական մարտի այդ զգուշավոր գրողակերպները, անցյալի ծանր բեռն ամբողջությամբ չէին ձգել դեռ իրենց ուսերից։ Շատ էր հետամնաց ու խեղճ հայ իրականությունը, շատ էր ծեծկվել դարերի ընթացքում հայ ժողովուրդը, որ միանգամից՝ աննկուն կամքի, անհողող համոզումների, արմատական մտածողության տեղ զինակիրներ հանդես բերեր։

Հնին կառչած, նորին թշնամաբար վերաբերվող մոլթ ուժերին հակադրվելու տրամադրություններ ունեցող այս փոքրաթիվ շերտի մարտիկներն մեջ պայծառ աստղի պես փայլում էր Աբովյանը, որն ամենից հաբա-

զատորեն էր խոսում հայ ժողովրդի սրտից, ամենից սրտառու էր դուրս նրա վերքերը, ամենից խիզախորեն քարոզում նրա անելիքները: Իր բոլոր թերու-թյուններով հանդերձ, նա ամենից ցայտուն արտահայտեց ժամանակի ոգին, ամենից խորը փորեց հնի արժատները և ամենից հեռու նեւեղ իր հայացքը: Եվ թողնական լուսավոր մտքին հաղորդակից եղած՝ իր ժամանակակից-ների մեջ նա ամենից ճիշտ ըմբռնեց կազմավորվող հայ ազգի ժողովրդա-կան մասսաների դեմոկրատական հրամայականը և իր կարճատև ու ար-գասավոր գործունեությունը նվիրեց այդ հրամայականի իրականացմանը: Հայ ժողովրդին դար ու փոսերից, կեռմաններ տվող արահետներից դեպի պատմության լայն ուղին առաջնորդելը կլանեց նրա ուշքն ու միտքը: Ոգևորված ու հափշտակված իր նպատակով՝ նա փուշ ու տատասկի հանդի-պեց միայն, քամեց դառնություն բաժակը, մինչև վերևոյնի դուռը հա-վատարիմ մնալով իր անշեղ սիրուն: Այդ սերը, որ վառում էր նրա սիրտը սրբազան հրով և հրահրում զենքը վայր չգնեղ անհավասար պայքարում, ուղղված էր հայ ազգին: Ազգին էր հառած մեծ հայրենասերի հայացքը, ազգի երջանկությունն էր նվիրված նրա մտածողությունը, ազգին օգտա-կար լինելու ցանկությունը էր շնչում նրա կուրծքը:

Ո՛չ երկաթ ապրիլն էր իմ ուզածը,
Ո՛չ լավ օր քաշիլն՝ ախ՛ իմ խնայածը:
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը զալ ազգիս:

Այսպես է դրել նա իր մասին միանգամայն ճիշտ ու անկեղծորեն: Արժանի հայ ազգը՝ կարիքից ու հարվածներից կքած, քրտնաթոր հայ ժողովուրդն էր: Նրան էր ուղղվում նա իր բողոքուն խոսքը, իր սերն ու դուրգուրանքը, նրա վերածնությունը էր մտահոգվում, նրա համար ստեղծագործում, նրա մանուկների դաստիարակության գործով զբաղվում:

Առաջին շեշտված դեմոկրատն է նա մեր նոր գրականության մեջ: Ազգի կազմավորման սկզբնական շրջանում նա դեռ խիստ շերտավորված վերաբերմունք չուներ դեպի հայ ազգի՝ իրենց շահերով տարբեր հատված-ները, նրա մոտ հաճախ նույնացած են ազգն ու ժողովուրդը, բայց և այն-պես նա չէր թաքցնում իր տեսլությունն ու զգվածքը դեպի սևսիրտ, խա-վարապաշտ վեղարավորները, դեպի անակալեզ, ցածրուղի հայ չինովնիկները, դեպի իրենց ռսկու վրա դողացող ու փող կուտակելը կյանքի իմաստը հա-մարող հայ վաճառականները:

Միայն ժողովրդական աշուղի շուրջը բոլորող, նրա հմայքին ենթարկ-վող մարդկանց համար էր նա բաց արևի իր լեզուն, նրանց էր հայտնում իր սրտի մեջ կուտակված վիշտն ու բերկրանքը, ցավերն ու հույսը—«Թո՛ղ ինձ այսուհետև տվես կանչին. լեշուս բաց ա էլե՛լ՝ իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թո՛ղ՝ տրամաբանություն գիտեցողը իրան համբայի համար զրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»:

Ժողովրդի գավաին է իր սիրելի հերոսը, ժողովրդի առաքինությունն-ը—նրա կորոնն ու թափը, աղատասիրությունն ու հայրենասիրությունը—մարմնավորող քանաքեղի քաջ երիտասարդ Աղասին: Նրան և իր ընկերնե-րին է իր հիշողության մեջ զարթեցնում, երբ աշուղ դարձած՝ հայ ժողո-վրդի վերքի ու հույսի մասին է պատմում—«Վերջը իմ ջլվան Աղասին

միտս ընկալի, նրա հետ հարկը քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուղղում էին՝ որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ մեծ մարդիկ էին, շատն էլ գիտ հլա սաղ սալամաթ՝ փառք աստուծո, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան: Ասեցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի» — ասում էր նա վշտոտ ու սիրող սրտով: Սիրելով իր ժողովրդին, Արժանը սիրում էր և հայրենիքը, որի հմայքի տակ էր գտնվում ինքը դեռ իր մանկութեան օրերից: Սրտի ամենանուրբ թելերով էր նա կապված հայ հայրենիքի հետ, նրա համար չկար ավելի բարձր արժեք, քան դարեւրի ընթացքում խեղճացած, որբացած իր հայրենիքի ազատությունը: Նա բուռն սեր էր տածում դեպի այն երկիրը, որտեղ հնչում էին հայ ժողովրդի վշտահար երգերը, որտեղ տանջվել և իրենց մահկանացուն էին կնքել իր պապերը: Նրա մտքում հազար ու մի պատկերներ էին առաջանում իր երկրի բարձր սարերը, արագահոս գետակները, երվներանդ ծաղիկները դիտելիս: Հայրենիքի ամեն մի հուշարձանը նրա գիտակցութեան մեջ զարթեցնում էր անցած դարերի խուռներամ հիշատակներ, ավերակ քաղաքներն ու դյուղերը, նախահայրերի հերոսականութեանն ու անփառունակ վախճանը:

Ոչ էջմիածնի խեղդող մթնոլորտից ազատագրվելու տենչը հրահրեց նրան թողնել հայրենիքը և ոչ էլ իր համար բարեկեցիկ վիճակ ստեղծելու ցանկությունը դրդեց նրան բաժանվել իր ծնողներից և ուղևորվել դեպի Դուրպատ: Հայրենասիրական զգացումը, իր ժողովրդին օգտակար լինելու ձրգտումը մղեց նրան դեպի հեռու հորիզոնները:

Թե ինչպիսի պիտի արտահայտվեր այդ օգտակար լինելը, ինքն էլ դեռ պարզ չէր պատկերացնում, ոչ իր անելիքների հստակ ծրագիրն էր կազմել, ոչ իր սովորելիքի բովանդակութեան բնույթն էր պարզել: Նրա հայրենասիրութեան տիրապետող շնչով դեռ զգացմունքային էր, դեպի իր ժողովուրդն ունեցած վերաբերմունքի մոտիվը՝ հուզական:

Պեկված՝ հայրենի երկրի արմատից, նա հմբախի ավերին հալումաշ էր լինում կարոտից, նրա աչքի առաջ ամենուրեք Մասիսն ու Արագածն էին կանգնած, նրա ականջին Ձանգվի վշտոցն էր հարատև հնչում:

Տնր իմ հոգիս, հետդ տնր,
էս խոր ձորումն մի թողար
Ինձ, որ էրվիմ, խորովիմ,
Ղարիբ երկրում մնամ օտար—

այսպես էր նա մորմոքված սրտով, բորբոքված կարոտով դիմում իր՝ մտքի երևակայութեամբ ստեղծած սիրուհուն, կամ, ավելի շուտ, իր համապարփակ սիրո առաքկա հայրենիքին: Այդ անշեջ սերն իր սրտում, Արժանը տարիներ անցկացրեց Դուրպատում, գիտելիքներ ձեռք բերեց, սովորվեց երոպական լուսավոր գաղափարներով: Դուրպատյան տարիները նրա հայրենասիրությունը գիտակցական դարձրին, պատմականութեամբ գունավորեցին: Նրա զգացմունքներն ու հույզերն ավելի խորացան, մարդկայնութեամբ համակվեցին: Նրան հաջողվեց խոշոր չափերով պատռել միջնադարականութեան թաղանթը և ասիական հետամնաց երկրի լուսավորականութեան իր ծրագրի ուղևորվել կազմել:

«Ղարիբ» երկրում երկար չմնաց Արժանը, նա շտապեց վերադառնալ

իր ծվատված ու տանջված հայրենիքը, խավարի մեջ ընկած իր ժողովրդի ցավերն ամոքելու: Մեծ հայրենասերը գերագույն ճիգեր լարեց բարձրացնելու այդ ժողովրդի գիտակցությունը, ներշնչելու կորովության ու արժանապատվության զգացում:

Լավատես էր նա, ոգևորված: Հայ ազգը տվյալներ ունի վերածնվելու համար, նրա մեջ ներհում են ստեղծագործական մեծ ուժեր, ամբարված են քաղաքակրթվելու հնարավորություններ: Ստեղծենք նրա համար նպաստավոր պայմաններ, և նա կյանքի կկոչի իր մեջ թմրած կարողությունները: Այսպես էր նա եռանդ հաղորդում ու աշխատանքի հրավիրում հայ ժողովրդի բարեկամներին:

Իր բուռն սիրո մղումով հիացմունքի ու ոգևորության մեջ ընկած՝ նա մերթ ընդ մերթ խախտում է ազգասիրության չափի զգացումը, դուրս գալիս փաստարկման սահմաններից և խտացնելով գույները՝ հայ ժողովրդին վերագրում այնպիսի հատկանիշներ, որոնք չեն կարող վավերացվել պատմական կյանքի տվյալներով: Այդ այդպես լինելով հանդերձ, մեր լուսավորիչը չափազանց հեռու էր իր սիրած ժողովրդին ֆետիշ դարձնելուց, նրան լավ հայտնի էին իր ժողովրդի արատներն ու թեթույթյունները—նա և՛ դրվատում է, և՛ քննադատում, խարազանում:

Նրա սիրտը մղկտում էր ժողովրդի տխուր վիճակի համար, հուսադրելու և մխիթարելու նպատակով ռոմանտիկական չափազանցությունների էր գիմում, սակայն երբեք հայ մեսիականության գաղափար չէր արծարծում, ազգային սնապարծ սահմանափակվածության մտայնությունը տուրք չէր տալիս, ոչ էլ ազգային եսասիրության մոտիֆներ հնչեցնում:

Պանդավառ զգացմունքներով փարած իր հարազատ ժողովրդին, անիծելով նրա դառն վիճակը, մեծ ժողովրդասերը ոչ մի թշնամանքի, ոչ մի ատելության տրամադրություն չէր հրահրում դեպի այլ ժողովուրդները: Խորը վշտով ու ցասումով նա նկարագրում է հայ ժողովրդի կրած տանջանքներն ու խոշտանգումները, որ նրան պատճառում էին զանազան սարդարներ ու խաներ, բեկեր ու մոլլաններ: Դեպի աշխատավոր թուրք ժողովուրդը նա ներողամիտ էր՝ գիտակցելով, որ նա չէր այդ խժոժությունների բուն հեղինակը, որ նա գործիք էր այդ խաների ու մոլլանների՝ ձեռին, որոնք թունավորում էին նրա միտքն ու զգացմունքը՝ զարթեցնելով նրա մեջ և ընթացք տալով կործանարար ու ջարդարար ցանկություններ՝ իր հայ հարեւանի վերաբերմամբ: Նա ատելություն ու զզվանք էր տածում դեպի ցարական քաղաքականության գարշելի ներկայացուցիչները, դեպի հայ ժողովրդի թշնամիները՝ զանազան մեծ ու փոքր աստիճան ունեցող Բլավացիները, բայց միաժամանակ անհուն երախտագիտությամբ և խոր համակրանքով էր հիշատակում ռուս մեծ ժողովրդին, որի զավակների արյան գնով հայ ժողովուրդն ազատագրվեց պարսկական հյուժիչ լծից: Նա հատուկ շեշտով նշում ու վեր էր հանում այլ ժողովուրդների զավակների այն հատկությունները, որոնք ցայտուն կերպով դրսևորում էին նրանց մարդկայնական տրամադրություններն ու գործողությունները, դեպի օտարն ունեցած կարեկցությունն ու գուրբ: Առաջ քաշելով մարդկայնությունը բնորոշող հատկությունները, որոնք կապակցում էին ժողովուրդներին իրար հետ՝ Աբովյանը բոլորովին էլ չէր ձգտում քարոզելու անգույն ու անհյուսիք աշխարհաքաղաքագիտություն և ոչ էլ համոզում էր, որ մի ժողովուրդ պետք է

ենթադրելի մյուսին: Ընդհակառակը, ժողովուրդների ուշադրությունը հրավիրելով նրանց կապակցող ընդհանուր մարդկային վրա, նա ցույց էր տալիս, որ այդ ընդհանուրն իր լիակատար, ամբողջական արտահայտությունը կարող է ստանալ, երբ այն կոնկրետացնող առանձին ժողովուրդները հնարավորություն ունենան անկաշկանդ ու փարթամորեն զարգացնելու իրենց կուլտուրան, ծավալելու իրենց ստեղծագործական ուժերը:

Մարդկությունը նրա համար մի գորշ մասսա չէ, որի մեջ կորչում են իր մասերի կոնկրետ դիմանկարները, համահարթվում տարբեր հատվածների բազմազանությունը, հայ լուսավորելի մարդկությունը համարում է ծաղիկների մի փունջ, որի մեջ ամեն մի ծաղիկ իր տեղն ունի գլաված, և ոչ ոք չի կարող ասել, որ սա լավ է, նա վատ, քանի որ նրանց տարբերությունն է կազմում այդ փնջի ներդաշնակ ամբողջականությունը: Նա ջերմ կողմնակից է ազգերի անհատական դեմքի պահպանման: Համաշխարհային պատմության բնմի վրա ամեն մի ազգ հանդես պիտի դա իր տվյալներով, որոնք հարստացնում են մարդկությունը, օժանդակում նրա առաջադիմությունը, ամեն մի ազգ պիտի աշխատի պահպանել իր անհատական դեմքի հատկանիշները, պետք է սիրի, գուրգուրի իր խնկական արժեքները:— «Ասենք ըլըյուլի լեզուն քաղցր ա, վերու հավին (խոխորին), սիրամարգին աստված գեղեցիկ գույն, սիրուն թևեր ու բմբուլ ա տվել: Ասենք վարդը շատ գովելի ա, բաս ընչի՞ չի մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս: Միթե վարդին տեսնողը՝ մանիշակին չի սիրել: Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի փոխել: Միթե քլըյուլի լսողը՝ կանարեյկին էլ չի պետք է պահի: Ամեն բան իր գինն ունի, շաքարեղենը քաղցր ա, ամա հացի տեղը երբ կըռնի»—հուզված փաստարկում էր նա:

Ժողովուրդը վառ պետք է պահի իր ստեղծագործության ջանք, կյանքի կոչի այն բոլորը, ինչ նրան հնարավորություն է տալիս պահպանելու իր դեմքը և զարգացնելու իր արժեքները հոգևոր մարդկության, քանի որ խնկական ազգային ստեղծագործ ուժի արդյունքը մնում է ոչ թե միայն մի ազգի սահմանների մեջ պարփակված, այլ դառնում է համայն մարդկության սեփականություն—այս միտքն էր պաշտպանում Աբովյանը:

Նա ձգտում էր, որ հայ ժողովուրդը գիտակցի իր արժեքների իմաստը, իր սիրող սրտի ամբողջ ուժը նա լարում էր, որ հայ նոր սերունդը բարձր պահի հայրենասիրության գրոշը և սպասարկի իր ժողովրդի շահերին: Ամեն մի մարդ պետք է սիրի իր ազգը: Ազգն է, որ մեզ մարդ է դարձնում, մայրական կաթով է սնվում մանուկը և մեծանում, ազգը գթոտ մայր է, որ հոգս է տանում մեզ համար, նրա հոգևոր սննդով ենք մենք կերակրվում, նրա մատուցած հյութերն են, որ հասունացնում են մեր միտքը, մեր գգացմունքները: Մեր ամեն ինչով մենք պարտական ենք մեր ազգին—մենք պետք է պահենք—պահպանենք՝ մեր բոլոր ուժերը տրամադրենք նրան, որ նա ծաղիկ, ճոխանա: Առանց մեր ազգի՝ կկորչեն մեր բոլոր ստեղծագործական, շինարար, ինքնուրույն ուժերը, կթառամին մեր սրտի ծաղիկները, կխամրեն մեր մտքի պտուղները—այսպես էր ուսուցում Աբովյանն իր հայրենակիցներին՝ հայ ազգի կազմավորման մանկական շրջանում, երբ ազգային ինքնագիտակցության արթնացումն առաջնահերթ անելիք էր: Աբովյանը նրանցից չէր, որոնք ցանկանում էին կազմավորվող ազգի մեջ՝ ժողովրդի վրա խնամակալություն ունենալ, օգտագործել նրան իրենց նեղ շահերին:

ծառայեցներու նպատակով, նա դրոշակակիրն էր այն հոսանքի, որը հեն-վում էր ժողովրդի վրա, ցանկանում էր ժողովրդի միջոցով իրագործել պատ-մական անհրաժեշտությունները թելադրվող ազգային մտքի զարթոնքի դժվա-րին խնդիրը: Նրա հույսն ու ապավենը հայ ժողովուրդն էր. ժողովրդի մեջ թաքնված տաղանդն էր զովերգում նա, ժողովրդի ստեղծագործ ընդունա-կություններով ու տվյալներով հիանում, ժողովրդին հորդորում, նրան գոր-ծի կոչում, վերածնվելու խրախուսում: Ամեն ինչ ժողովրդի համար, ժողո-վրդի միջոցով—այս էր նրա նշանաբանը:

Արժվանի «Վերքը» հայրենասիրության անմահ կոթող է: Հայ ժողո-վրդի պատմության նշանակալից շրջաններից մեկի այդ էպոպեան, ժողո-վրդի կյանքի այդ հանրագիտարանը՝ «սինկրետիկ» արվեստի մի յուրօրի-նակ ստեղծագործություն է: «Վերքը» և՛ էպոս է, և՛ քնարերգություն, և՛ պատմություն է, և՛ ազգագրություն, և՛ պատմափիլիսոփայություն է, և՛ հրապարակախոսություն: Այդ բոլոր տարրերը հավաքված են մի հանգույցի մեջ, բոլորի միջով թափանցում է ընդհանուր հայտարարի բերող մի խնդիր՝ հայ ժողովրդի պաշտպանության և ազատագրության խնդիրը: Այս խնդրի լուծման մեջ էլ ի հայտ գալիս Արժվանն իր ամբողջ հասակով, սա է նրա անսպառ ոգևորության աղբյուրը, նրա ստեղծագործության պափոսը:

Մեծ հայրենասերը մարգարեական շնչով նախազգուշացումներ է ա-նում, բոցավառ քարոզչի ոգևորությամբ հորդորներ կարդում, բանաստեղ-ծական բարձրաթռիչ ավյունով ողբում ու հուսադրում, երբ իր ժողովրդի անցյալի ողբերգական վիճակն է նկարագրում, նրա հերոս զավակների ան-հավասար պայքարն է գովերգում, երբ այդ ժողովրդի ծանր հարվածներից ընկճված, բայց երբեք չմեռած հոգու մասին է խոսում, նրա գալիք օրերի հեռանկարների, ակնկալությունների մասին հայտարարություններ անում: Նա ողբում է հայ ժողովրդի անցյալի դառն վիճակը, սակայն գլխին մոխիր չի ցանում, փակուղու առաջ չի կանգնում, չի հուսահատվում—կազմավոր-վող ազգի, ժողովրդի երգիչը վհատության մեջ ընկնել չէր կարող—այլ պատ-մական վերլուծացի ուղին էր ցույց տալիս: Պայծառ լավատեսությամբ ու հաղթանակի զգացումով է տոգորված «Վերքը»: Ե՛վ հեռավոր օրերի, ուժման-տիկական շղարշի տակ արթնացած վերհուշերը, և՛ մոտիկ անցյալի սիրելի դեմքերի, շոինդ ու շառաչի վերականգնանացումը, և՛ իր հուշականությամբ համակած խորհրդածությունները «Վերք»-ի մեջ—այդ բոլորը նվիրված են այն գործոններին, որոնք հայ ժողովրդի պաշտպանության, ազատագրման, վերածնության խմորանյութը պիտի կազմեն:

Սակայն պատմական անցյալն ըմբռնելու, ապագան հաստատուն հիմ-քերի վրա կռելու համար անհրաժեշտ էր ծանոթանալ այն արգելափակներին, խոչընդոտներին, որոնք ջգրված էին հայ ժողովրդի առաջ և վերափոխված պահպանում էին իրենց գոյությունը: Նրանք էին, որ հնարավորություն չտվին հայ ժողովրդին ազատ շունչ առնելու, անհաշտ պայքար մղելու իր վերելքը, իր ուժերի միասնությունն ապահովելու և իր արժանավոր տեղը գրավելու այլ ժողովուրդների շարքում—այսպես է մտածում մեծ հայրենասե-րը, այդ արգելափակներն էին զբաղեցնում նրա միտքը, նրանց փոխադարձ կապի հարցը, նրանք հաղթահարելու իրական միջոցների ստիպման հնա-րավորությունը և այդ միջոցները պատմական նոր իրադրության մեջ կի-րառելու խնդիրները—ահա Արժվանի ստեղծագործության կիսակետը:

Խոչնչն էր ջլատում հայ ժողովրդի դիմադրական ուժը և դատապարտում նրան պարսկա-թյուրքական դաժան տիրապետության կապանքների մեջ լլկված մնալու: Խոչնչն ենթարկվելով անվերջ հալածանքների ու տանջանքների՝ այդ ժողովուրդը մասսայորեն ծառս չեղավ իր կեղեքիչների դեմ: Խոչ միջոցների նա պետք է դիմեր իրեն խեղդող լուծը դեն շարտելու համար: Այս հարցերի պատասխաններն են, որ սկզբից մինչև վերջն օղակում են «Կերքը» և որոշում նրա նպատակաւացութեան բնույթը: Մեծ հայրենասերն իրեն հուզող այս հարցերը լուծելու համար նշում է մի շարք պատճառներ և նրանց հետևանքներին վերադրում հայ ժողովրդի անցյալի անմխիթար իրականութիւնը: Իր դժբախտ վիճակի համար ամենից քիչ մենք իրավունք ունենք մեղադրելու բուն ժողովրդին, նա իր մեջ պարփակում էր հոգեկան բարձր կարողութիւններ, առաքինի հատկութիւններ, որոնք անհրաժեշտ էր գրստորել և ընթացքի մեջ դնել: Ժողովրդի գիտակցութեան մեջ շատ քիչ էին հանդես գալիս պայքարի գաղափարներ սերմանող, նրան ըմբոստացման հրավիրող զեկավարներ—այս է Աբովյանի կարծիքը: Նա աչքաթող չի անում պատմութեան ընթացքում կուտակված հոռի հատկութիւններն այն բեռը, որ ծանրանում էր հայ ժողովրդի վրա—այն, որ դարերի ընթացքում ստացած հարվածներից ծովեց հայ ժողովրդի ողնաշարը, սմբեց նրա խիզախութեան ոգին, թուլացավ կորոյն ու թափը: Շատ են եղել հայերի մեջ—ասում է Աբովյանը—այնպիսի տղամարդիկ, որոնք չէին հանդուրժում թշնամու ծանր լուծը և իրենց վարքագծով երկյուղ ու վախ էին ներշնչում: Մեծ հայրենասերը հատուկ նպատակադրութեամբ փնտրում է պատմութեան ընդերքում անհայտ մնացած այդ քաջերին, հպարտանում է նրանցով և գովերգում նրանց խիզախութիւնը: Սակայն, դժբախտութիւնն այն էր—ցույց է տալիս նա—որ ժողովուրդը սիրելով այդպիսիներին, նրանց չէր ընդօրինակում, նրանց հետևից չէր գնում: Նրա սիրելի հերոսը՝ ժողովրդի զավակ Աղասին՝ իր համագլուղացիներից հիմնականում տարբերվում էր նրանով, որ ընտելացած էր զենք գործածելու մեջ և տեղը եկած ժամանակ կարողանում էր այդ զենքն ուղղել հայ ժողովրդի թշնամիների դեմ: Աղասին մեն մենակ դիմադարձ է լինում դժբախտ Թագուհուն առևանգող ֆառաշներին, իսկ ժողովուրդը, որ կցանկանալ ազատել աղջկան՝ ոչխարների հոտի պես փախչում է ֆառաշի մի սպառնալի շարժումից և միայն ախ ու վախով արտահայտում իր կարեկցութիւնը: Աղասին այն կարծիքն էր բաժանում, թե լավ է մեռնել կանգնած, քան թե ապրել ծնկաչոք, իսկ իր համագլուղացիները նրան համբերութիւն, ստրկամտութիւն են քարոզում, ինչ գնով էլ ուզում է լինի, գլուխ պահել սովորեցնում:

Բավական չէր, որ թշնամին իր մշտական հարվածներով բթացնում էր հայ ժողովրդի ազատասիրական ոգին. հայ եկեղեցին, քրիստոնեական կրօնն էլ իրենց հերթին կրակի վրա յուղ էին ածում, ավելի էին ամրապնդում ստրկամտութիւնն ու թուլամորթութիւնը—ցույց է տալիս Աբովյանը: Քրիստոնեութեան ազդեցութեան տակ հայ ժողովուրդը մոռացութեան տվեց զենքի հարգը, մահացու մեղք համարեց պայքարի մեջ արյուն թափելը: Իզուր չէ, որ նա Աղասուն նկարագրում է որպես ուսույական զգացմունքային կրօնի հայկական տարբերակի մի ներկայացուցչի դերում, Աղասին չի ընդունում քրիստոնեական հեզութիւնն ու խոնարհութիւնը դարձնում արյամբ է հատուցում: Միայն այն վայրերի հայերն էին թշնամուն

վախ ներշնչում, որոնք այս ու այն չափով գերծ էին մնացել հայ եկեղեցու բթացնող ազդեցությունից—ասում էր Աբովյանը: «Փամբակու, Լոռվա, Ղարաբաղու, Մշու, Բայազդի հայերը՝ սարում, չորում մեծանալով, շատ տերտերի ու ժամի ձեն չսելով՝ մինչև էսօր էլ իրանց սովորության հետ՝ էս քաջ տղամարդության հոգին էլ ունին, որը որ ունեցել են մեր անհաղթելի նախնիքը: Ու տեղն ընկած վախտը՝ էլ ավետարանի ու վարդապետի խոսք նրանց չէր վախացնում՝ թե որ արին վեր ածեն, գոխքը կերթան...»—այս գնահատականն է տալիս եկեղեցուն նա, որը հայ իրականության ողորմելի պայմանների մեջ տապակվելով չկարողացավ եկեղեցականության հետևողական քննադատի դերում հանդես գալ:

Հայ ժողովրդի՝ իր ծանր լուծն անմուռն լռանելու մեջ պտկաս դեր չի խաղացել և այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում նա մոռացություն տվեց պապերից ժառանգություն մնացած քաջակորով ավանդները, կորցրեց պատմական հուշարձանների իմաստն ըմբռնելու կարողությունը: Որտեղ որ ժողովուրդը դեռևս ուկորվում էր անցյալի հոյակապ բեկորներով, որտեղ նրա աչքի առաջ վերակենդանանում էին հինավուրց քաջամարտիկները, այնտեղ նա պահպանում էր իր առնականությունը և հասկանում թշնամուն դիմադրելու անհրաժեշտությունը—խորհրդածում է Աբովյանը:

Լոռեցի Հովակիմը մի հսկայամարմին հերոս է, նրա քաջությունը սահման չունի, նրա մի ձայնն իսկ ահ ու գողի մեջ էր գցում թշնամիներին: Ո՛րտեղ ձեռք բերին այս հովակիմներն իրենց զովելի հատկությունը՝ նրանք բնության որդիներ են, ասում է Աբովյանը, սովորած նրա պայմաններին, մեծացած բարձր սարերի, խոր ձորերի մի երկրում, որտեղ ամեն քայլափոխում անխուսափելի է կռիվը ավազակների, հրոսակների հետ: Բնության հարվածներին ընտելացած՝ անընդհատ կռիվների մեջ էր ամրապնդվում նրանց հոգին, ծայր առնում նրանց քաջարի սովորությունները: Կար մի ուրիշ հանգամանք ևս, որը թելադրում էր նրանց վիզ չծռել զարկողի առաջ—«Ա՛խ՝ Թնչ տեղ են կենում՝ որ էսպես չանեն, էս սիրտը չունենան—վարժատան չէին՝ մեռած բառով, անհոգի շնչով, թույլ լեզվով լսել՝ թե հայք էլ վաղ թաղավորություն ունեին, որ կամ չհավատալին, կամ քունները վարպետի անսիրտ պատմության վրա տաներ: Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ, նրանց համար կենդանի վարժապետ: Ամեն գերեզման, ամեն արձան նրանց համար կենդանի վկա ու պատմագիր: Աբովյանի գործունեությունը զարկ էր տալիս հայ ազգի կազմավորման զարգացմանը՝ դեմոկրատական հիմքով: Այս կապակցությամբ նա հայ ժողովրդի լուսավորությունը համարում էր բացառիկ նշանակություն ունեցող մի գործ: Ամեն մի հայրենասերի սրբազան պարտականությունն է մասնակցել ժողովրդին լուսավոր գաղափարներով կրթելու, վերածնելու պատասխանատու աշխատանքին: Այդ նպատակն իրադրվելու համար տուաջին հերթին հարկավոր է հայ ժողովրդին մատակարարել համապատասխան գրականություն՝ նրան միանգամայն մատչելի լեզվով—այս էր Աբովյանի լուսավորական ծրագրի կորիզը: Աբովյանը մի սոսկական կուլտուրաբեզեր չէր, որն առաջադրել էր իրեն օգտակար գիտելիքներ տարածել ժողովրդի մեջ, նրա ձգտումների շրջանակներն անհամեմատ ավելի լայն էին, նրա լուսավորական ծրագրի էականը—դա հայ

ժողովրդի քաղաքական գիտակցության բարձրացումն էր, հասարակական նոր ստեղծված պայմանների մեջ նրան իր պաշպանության զենքերի նշանակությունն ըմբռնել տալն էր: Մեծ ժողովրդասերը պատրանքներ չէր ստեղծում, հեշտ հաղթանակներ չէր ակնկալում և ոչ էլ վհատվում դժվարությունների հանդեպ: Նա լավատես էր ապագայի նկատմամբ, գիտեր, որ հայ ժողովուրդը ծառավ է լուսավորության, որ նրա միտքը մի խոսքի դաշտ է՝ լի մոլախոտերով, որոնք անհրաժեշտ է ոչնչացնել և սերմել կենդանի, ազնիվ գաղափարներ. նա հավատացած էր, որ այդ գաղափարներն առատ պտուղներ կտան: Լուսավորեցեք ժողովրդին՝ այն ժամանակ նա կըհասկանա իր անելիքները, արագ քայլերով առաջ կգնա—սա էր Արովյանի համոզմունքը: Նա զայրույթով ու հեզանքով է հերքում այն մարդկանց, որոնք կարծում էին, թե հայ ժողովուրդը բնավ էլ սեր չունի դեպի գիրն ու գրականությունը և գերադասում է քարացած մնալ տգիտության մեջ: «Ում հետ էլ որ խոսում էի, էն էին թանխա տալիս՝ թե մեր ազգը ուսումնասիր չի, կարգալը նրա համար գիրն չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարգալ չսիրող ազգը միպենսոնի պատմությունը, Պղնձե քաղաքի հիմար գիրքը ձեռնն ձեռ. էր ման ածում»—արձանագրում էր Արովյանն իր տեսածն ու գիտածը: Այսպես էր հայ ժողովրդի կրթական վիճակը ռուսական տիրապետության առաջին տասնամյակում, երբ Լեսինգի ու Հերգերի մտքի աղբյուրից իր ծառավը հագեցրած Արովյանն առաջ նետվեց որպես բարենորոգիչ, պայքարի ղրոշ բարձրացնելով հայ հասարակության բոլոր խավարամիտ, հետադիմական ուժերի դեմ:

Լուսավորության բացակայությունն էլ ավելի մեծ չափերով էր խոցում հայ ժողովրդին պարսկա-թյուրքական անարգ իշխանության սև տարիներին: Անծայր խավարի մեջ էր նա թափառում, չգիտակցելով, որ ստրկական վիճակն անպատիվ ու խայտառակ է—սրտի ցավով հայտարարում էր Արովյանը: Աղասին Անիի մոտ ազատել էր մի խումբ թյուրքահայերի, որոնց պարսիկները տանում էին ծախելու: Նա հորդորում է այդ հայերին չվերադառնալ իրենց երկիրը, այլ մնալ Անիում և ռուսական հովանու տակ նոր կյանք սկսել: Սակայն, Աղասու հայրենասիրական քարոզների հանդեպ անդրդվելի են մնում այդ մարդիկ, նրանք ձգտում են վերադառնալ իրենց բնակավայրը, որ ստրկության մեջ շարունակեն քարշ տալ իրենց կյանքը:

Ինչո՞ւ այսքան անգիտակից են այս մարդիկ, ի՞նչն է նրանց գրաստի գրության հասցրել. ո՞ւմ է հարկավոր մեղադրել այս զարհուրելի հետամնացության համար՝ սրտմտորեն հարց է տալիս իրեն Աղասի-Արովյանը: Ինչո՞ւ թանձր խավար է պատել նրանց սրտերը, ազատ կյանք վարելու զգացումը մեռել նրանց մեջ: Լուսավորություն, լուսավորություն, ահա թե ի՞նչ է պակասում նրանց—պատասխանում է իր հարցին մեծ հայրենասերը: Ոչ ոք չի փորձել բաց անել նրանց աչքերը, լույսի ոչ մի ճառագայթ չի թափանցել նրանց խավար մտքի մեջ, ստրուկ էին ծնվել, ստրուկ ապրել և չեն հասկացել, որ իրենց վիճակն անպատվաբեր, արդահատելի է: Ա՛խ, եթե նրանց սիրտը պայծառացած լիներ, եթե նրանց բթացնող մշուշը ցրված—մտածում է Արովյանը: Խորը վշտով, անծայր կարոտով ու սիրող սրտի հանդիմանությունով նա Աղասու բերանն է դնում իր սրտի արյունով զրած այս տողերը—«...վայ էն էրեխին, վայ էն ազգին, որ աչքը էնպես գողում բաց

կանի, որ լսի տեղ խավար կտեսնի: Աչքը բաց դուզ ճամփեն կթողա, քարեքար կընգնի: Վայ էն ազգին՝ որ բնական օրենքը կթողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ տվող չի ունենալ, որ նրան հոգի տա և ոչ հոգին էլ հանի: Յարար որ լավ կարդացող էր էլել, երեխեքանց ջոկ, ժողովրդին ջոկ՝ գիշեր ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր, հիմիկ մեր ազգը է՞ս հալին կըլեր, է՞ստեղ կընգներ: Սարի հայվանն էլ մեզանից լավ ա ապրում, հարամուց, ֆորսկանից յա փախչում, յա վրա թոչում, կտրատում, գլուխը պահում: Ժախ բունն էլ որ քանդում ենք, ջժվժում, թևին դլխին ա տնում: Մենք ծախ դղար էլ չկանք, որ մեր բունը պահենք»:

Արովյանը, որպես լուսավորիչ, առաջադրում է բնական օրենքի սկզբ-բունքը. արհեստական օրենքը բթացրել է ժողովրդին, նա պետք է հետևի բնության ձայնին՝ նման կենդանիների, որոնք թշնամուց սլաշտպանվում են բոլոր հնարավոր միջոցներով: Մեր լուսավորիչը գիտե, որ մարդը կենդանի չէ, որ նա օժտված է բարձր գիտակցականությամբ և պետք է իր պաշտպանությունը կազմակերպի բանականության միջոցներով: Բանականությունը մեզ ասում է, որ չկա ավելի անպատվաբեր, նվաստացուցիչ վիճակ, քան անարգ թշնամու ծանր լծի տակ խոնարհվելը, իրեն կաշկանդող շղթան ջախջախելու ձգտում չունենալը: Հերոս է նա, ով գիտակցաբար է յատարում իր պարտականությունը ժողովրդի հանդեպ և զենքը ձեռին պաշտպանում նրան թշնամու հարձակումներից: Փառք ու պատիվ այն հերոսին, որ իր կյանքը չի խնայում ժողովրդի սրբազան իրավունքները նվաճելու գործում: այդ դոհողությունն ապարդյուն չի կորչում, նա ոգևորում է ընկճվածներին և մարտը շարունակելու տրամադրություն ստեղծում, նա գալիք հաղթանակի երաշխիք է դառնում: Բայց վայ նրան, ով փախչում է կովի գաշտից իր ողորմելի կաշին փրկելու համար, ամոթ այն երկչոտին, որի աչքի առաջ հոշոտում են իր սիրելիներին, իսկ ինքը չի դիմադրում դահիճներին: Այդպիսիները, եթե չեն հասկանում իրենց կատարած գործի նողկալիությունը, արժանի են խոբը խղճահարության, բայց նրանք կորած չեն, նրանց գեռ հնարավոր է վերափոխել, ենթարկվելով հերոսին, նրանք իրենք էլ կարող են հերոսանալ: Բայց եթե երկչոտը գիտակցում է իր վարմունքի գարշելիությունը և աշխատում է այն արդարացնել զանազան ողորմելի փաստարկներով, ապա նա դավաճան է՝ արժանի արհամարհանքի ու զզվանքի. այսպես էր մտածում մեծ հայրենասեր Արովյանը:

Ըմբոստ էր նրա հոգին, խիզախ՝ նրա սիրտը, անսահման՝ նրա սերը դեպի իր տանջված ժողովուրդը, արծիվ էր նա ցանկանում դարձնել այդ ժողովրդի զավակներին, մեծ սիրադուրծությունների, ազգային արժանապատվության զգացում ներշնչել նրանց: Անհաշտ կռիվ էր քարոզում ժողովրդին կեղեքողների դեմ, զգոնության հրավիրում և զենքը միշտ պատրաստ պահելու ու միաբանված՝ ընդհանուր ուժերով թշնամուն հարվածելու քարոզ կարգում:

Հացախառն ձայնով, բայց և խրոխտ հպարտությամբ պատմելով խըր-դարաքիլիսեցիներին՝ Հասան խանի հրոսակներին ցույց տված դիմադրության դրվագները, անմահացնելով կռվող հերոսներին, նկարագրելով կոտորածի քստմեցուցիչ տեսարանները՝ Արովյանը նախազգուշացման շեփոր է փչում և ահեղ պայքարի հրահանգներ տալիս, հավիտենական անեծքով խաբանում մորթեպաշտներին, երկչոտներին, թուլամորթներին—«Բայց վայ ձեր

օրին, ձեր օղլուշաղին, թե դուք կենդանի կանգնի՞ք՝ ձեր աչքով տեսնի՞ք սիրելյաց տանջանքն՝ մղկտալով։ ձեռներդ խաչած՝ ձեր դռը ծեծելով հոգ տաք ձեր գլխին, թաղեք ձեր ողբին, ձեր սիրտը հանողին, կյանքը քանդողին եսիր դառնաք ու էլի չպրծնիք, էլի միշտ տանջվիք ու ձեր հոգի վրա դուք մատաղ ըլիք, ձեր աշխարհումը էսպես դուք մաշվիք ու դեռ սիրտ չանեք, դուք չմիաբանիք, մեկ օր էս սուր, թուրն, էս կրակն ու բոցը, էս պղինձն, շամբուրն, էս վառ հնոցը դուք ձեր թշնամուն միշտ հազիր չապահեք, նրան դուք չէրեք, նրան չկոտորեք, ձեր ազգն, աշխարհը դուք ազատ չանեք ու էսպես թշվառ, տարաբախա մնաք»։

Որքան Արուսյանը մահու չափ ատում էր պարսկական լուծը, այնքան հուզմունքով լի երախտագիտությամբ էր վերաբերվում դեպի ռուս կառավարությունն ու ռուս ժողովուրդը։ Չէ՞ որ դեռ մանուկ հասակից նա տեսավ, թե ինչպես հայ ժողովուրդն անձկալիորեն սպասում էր ռուս հաղթական դուրքի երևալուն, որի հետ նա կապակցում էր իր ազատագրման իրականացումը։ Չէ՞ որ իր երիտասարդության օրերին նա ականատես եղավ, թե ինչպիսի խանդավառությամբ հայ երիտասարդության քաջամարտիկները գեներ ձեռին աջակցում էին ռուս զորքի առաջխաղացմանը և իրենց արյունը թափելով մասնակցում հայրենիքի ազատագրման գործին։

Պատմական այդ օրերին հայ ժողովուրդի համար միևնույն էր, թե ինչ աստիճան, ինչ դիրք ունեին այն ռուս մարդիկ, որոնք հեռավոր Ռուսաստանից հասել էին Արարատյան երկիրը։ Թե ցարական զենեքալները և թե զինվորական համազգեստ հագած ռուս կոռուփի դյուղացիները հավասար չափով սիրելի էին նրան, տարբերություն չէր գտնում նրանց մեջ, նա տեսնում էր միայն ազատարար ռուսին։ Արուսյանն իր ժողովուրդի երախտապարտության բուռն զգացմունքների, նրա սրտում կուտակված կարոտի, նրա ուրախության, նրա ազատման հառաչանքի հարազատ արտահայտիչն էր։ Հայ ժողովուրդի ծոցում մեծացած, նրա վշտին և ուրախությանը մասնակից նա այդ ժողովուրդի մտայնությամբ ու բառերով ձևակերպեց նրա կյանքի մեջ տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունը։ Նա խանդավառ սիրով հարեց ռուսականությանը, հիացմունքով ու գոհունակությամբ պատմեց ռուս զորքի՝ Հայաստան մուտք գործելու մասին—«Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարը մտավ, ու զզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր քաջած օրերը մտքներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեղ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց»—ոգևորված գիմում էր նա իր հայրենակիցներին։

Մեծ հայրենասերի զլուխը պառլյտ էր գալիս ուրախությունից, նրա աչքերի առաջ ծավալվում էին հրապուրիչ հեռանկարներ։ Դարերի ընթացքում հայ ժողովուրդը ենթարկվում էր շահերի, սարդարների, խաների չընդհատվող վայրագություններին, նա ոչնչանում էր ֆիզիկապես, լրկվում բարոյապես, բթանում մտավորապես։ Արուսյանն այս բոլորին իրազեկ էր, շատ անգամ էր դիտել, թե ինչպես հայ ժողովուրդի գովակները հոշոտվում էին վայրագ թշնամիների կողմից, թե ինչպես դերում էին անպաշտպան հայ շինականներին և քշում որպես անասունների ծախելու համար, թե ինչպես աղյիկներին խլում էին իրենց մայրերի գրկից և քաշում

աարդարների հարեմները: Վերհիշելով այդ տխուր ժամանակները, հայ ժողովրդի անօգնական, որք վիճակը՝ նա թախիծով ու գառնությամբ բացականչում էր՝

Վայ է՛ն ազգին՝ որ աշխարքումս անտեր ա,

Վայ է՛ն երկրին՝ որ թշնամու գերի ա,

Վայ է՛ն խալխին՝ որ ինքն իր կյանքն, աշխարքը

Զի՛ պահպանիլ, ու հարամու ձեռ կտա:

Անցան տարիներ—հայ ժողովուրդն ազատագրված էր պարսկական հրի ու սրի կարգերից, այժմ նա ապրում էր նոր, ավելի տանելի պայմանների մեջ, նրան այլևս ֆիզիկական բնաջնջման վտանգ չէր սպառնում, նա ներգրավված էր ավելի կանոնավորված գործառնություններ ունեցող մի պետութայն կողմից: Արդյանն այժմ չէր առաջադրում իր հայրենակիցներին՝ ոչ մի զոհողութայն առաջ կանգ չառնելով՝ ղենքի ու ժով պաշտպանել իրենց կյանքն ու պատիվը, նա հիմա հղանում էր հայ ժողովրդին ևրոպական լուսավոր գաղափարների ոգով դաստիարակելու ծրագիրը:

Հայ ժողովուրդն ազատագրվեց պարսկական անարդ լծից, այժմ նա պիտի թոթափի իր վրա ծանրացող միջնադարյան խավարի լուծը, հազար ու մի նախապաշարունները, տգիտություն սերմանող սխոլաստիկան, միտք բթացնող տերտերականությունը: Այդ բոլորը հաղթահարելու համար անհրաժեշտ է ժողովրդի ձեռը տալ այնպիսի գրքեր, որոնք կարողանային բարձրացնել նրա գիտակցությունը, լուսավոր մտքեր քարոզելին, նրան թարմ գիտելիքներ մատակարարելին: Անհրաժեշտ է նրան ծանոթացնել կատարելագործված տեխնիկայի նվաճումներին, նոր արհեստներ սովորեցնել, նրա մատաղ սերնդի համար նոր տիպի դպրոցներ կազմակերպել—այսպես էր գրում Արդյանն իր լուսավորականութայն գրողակի վրա:

Մեծ լուսավորիչը խորապես գիտակցում էր, որ իր ծրագիրը հաջողությամբ կենսագործելու ամենաանհրաժեշտ նախապայմանը—դա ժողովրդին հասկանալի լեզվի հաղթանակի ապահովումն է, քանի որ այդ լեզուն է նրան լուսավորելու գլխավոր գործիքը, նրա մտքերին ու զգացմունքներին նոր բովանդակություն հաղորդելու ղենքը:

Արդյանին րարեբախտություն չէր տրված ամբողջովին դուրս գալու իր միջավայրի նեղ շրջանակներից, շատ էին հետամնաց նրա ժամանակաշրջանի հայ հասարակական հարաբերությունները, թանձր խավարը դեռ չէր չքացել մեր հայրենիքից: Անցյալի թաթը ճնշում էր և մեր մեծ լուսավորչին, նրա աջն ու ահյակը սերտաճվում էին իրար: Խոսելով նոր կադմավորվող հայ ազգութայն ղեմքի պահպանման ամենակարևոր գործոնների մասին, նա առաջ է քաշում լեզուն, սակայն միաժամանակ կառչում է և հավատին: Բայց և այնպես հավասար արժեք չունին լեզուն ու հավատը դրոպատյան դպրոցն անցած Արդյանի համար—նախապատվությունը նա տալիս է լեզվին, նրա արժեքն է վեր հանում, նրան հավատարիմ մնալու նշանակությունը շեշտում: Պարզ, անպաճույճ համեմատություններով, միաժամանակ հորդուն հուզականությամբ նա աշխատում էր հայ ժողովրդին սիրելի դարձնել իր լեզուն—«Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ինչի՞ նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզունն ա ու եսվատը... ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր

կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ: Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի ըլիլ: Մեր աչքը որ հանենք ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը: Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին: Էն էլ ա մեր միտքը չի՞ պետք է ընկնի»:

Խորապես դիտակցելով ժամանակի պահանջը, մեր նոր գրականության ռահվիրան՝ վառված հայրենասիրական անշեջ կրակով՝ ամենից շատ նպաստեց իր սիրած ժողովրդի լեզվի հաղթանակին: Սակայն նա, ի հակադրության իր ժամանակի կեղծ, հետադիմական լեզվապաշտների, դեմ չէր արտահայտվում հայ երիտասարդության՝ օտար լեզուներ սովորելուն, նա ամենից շատ էր խրախուսում ու աջակցում իր աշակերտներին զբաղվելու օտար լեզուներով, կատարելագործվելու նրանց մեջ: Միայն թե նախադրությանցում էր իր երիտասարդ բարեկամներին, որ նրանք, հրապուրվելով օտար լեզուների բարեմասնություններով՝ չմոռանան իրենց մայրենի լեզուն կամ ժողովրդի հետ խոսելիս, նրա համար պրեկիս՝ օտար բառերով չծանրաբեռնեն իրենց խոսքը, խառնաշփոթ, անհասկանալի, տգեղ լեզու չգործածեն, այլ ուշադրություն դարձնեն լեզվի մաքրության վրա—«Դու քո լեզուն, որ իստակ խոսաս, ի՞նչ ֆնաս ունի, հենց գիտում ես, խելքդ ձեռիցդ կառնեն, թե սովորած իմաստությունդ ջուրը կթափի, կամ թե չէ տերություն սիրտն ես ուզում շահիլ»—այսպես էր դիմում նա իր ժամանակի այն հայ ինտելիգենտներին, որոնց խոսակցական լեզուն ոչ թե հայերենն էր, այլ մի ինչ-որ զարհուրելի խուժողուժ շիլափլավ:

Գորովագին սիրով, հայրական խրատով աշխատում էր նա հայ երիտասարդների մեջ ստեղծագործական կրակ վառել, ազգային հպարտության զգացում զարթեցնել, փառքի հասնելու ձգտում առաջացնել—«Բաս չե՞ք ուզիլ, որ դուք էլ զրքեր դրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ...: Բաս ձեր սիրտը չի՞ ուզիլ՝ որ դուք էլ ոտանավոր դրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, որ այլազգք իմանան՝ թե մեր միջումն էլ ա էլիլ երեկի դրող ու մեր լեզուն դհա ավելի սիրեն»—ոգևորված դիմում է Աբովյանը՝ է՛լ ավելի է ոգեշնչվում նա, ենթադրելով, որ ցարական կառավարությունը ոչ միայն արգելքներ չի հարուցի հայ ժողովրդի առաջ իր լեզուն, իր գրականությունը դարգացնելու գործում, այլև կաջակցի նրան—«Բարեխնամ տերությունը ե՞րբ կուզի՞ որ մարդ իրան լեզուն կտրի, իր ազգիցը հեռանա: Բաս էլ հեր են էսքան վարժատուն շինում, վարժապետ պահում, աստիճան, պատիվ տալիս»—ասում էր նա իր «Վերք»-ում:

Պայքարելով աշխարհաբարի հաղթանակի, նրա կատարելագործման, ճոխացման համար, Աբովյանը միաժամանակ րացառիկ ուշադրություն էր դարձնում ողու լեզվի վրա և այն նույնքան անհրաժեշտ համարում հայ ժողովրդի համար, որքան հայերենը: Հայ ժողովուրդը բախտավորվեց մտնելով ողու պետության հովանու տակ, հայ մարդիկ հնարավորություն ունեն մասնակցելու պետական կյանքին, հաղորդակից լինելու ողուական բարձր կուլտուրայի բարիքներին: Ռուսաց լեզուն պետական լեզու է, միաժամանակ նա ողուական բաղմանդմանի կուլտուրայի արտահայտման ամենակարևոր միջոցն է: Հայ ժողովուրդն իր պահանջները կարող է բավարարել, իր առաջ դրած խնդիրները լուծել առաջին հերթին ծանոթանալով ողուաց լեզվին և

օգտագործելով այն—այս դրույթներով էլ մոտենում Արուստան՝ պետական լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը շեշտելիս:

Արուստանի գրական-հասարակական գործունեությունը բնորոշվում է ընդհանուր գծերով այն հատկանիշներով, որոնք հասուկ էին գերմանական լուսավորիչներին, միայն թե այս վերջիններն աշխատում էին արդեն կազմավորված գերմանական ազգի համար, իսկ Արուստանը գործ ուներ հայ իրականության խոսքին դաշտի հետ, որի վրա զեռ նոր-նոր էր սկսում կազմավորվել հայ ազգությունը: Չափազանց անբարենպաստ էր նրա ժամանակի հայ իրականությունը՝ բեռնուցիոն գաղափարախոսության սերմերն ընդունելու և ծիլեր արձակելու համար: Արուստանը մեկն էր այն գեմեկրատ ինտելիգենտներից, որոնք կարծում էին, թե ցարիզմը կաջակցի հայ ժողովրդին իր կյանքի պայմանները բարեկարգելու մեջ:

Իրականությունը հետզհետե փշրեց մեծ լուսավորչի հույսերը, ցնդեցրեց նրա քաղաքական պատրանքները, նրա աչքերը բացվում էին ցարիզմի դադուկային քաղաքականության «գեղեցիկություններից»: 40-ական թվականներին հիասթափության որդն սկսեց կրծել նրա լավատեսությունը լի սիրտը: Թոմանտիկ Արուստանի մտայնության և իրականության ծայրերը հեռանում էին իրարից: Նա ընկնում էր անելանելի վիճակի մեջ, սկսվում էր նրա կյանքի վերջին՝ ողբերգական շրջանը: Նա կորցնում էր իր հեռանկարները, նրա պայծառ հայացքը պղտորվում էր: Իր միջավայրի թշվառության, իր մեջ խորացած քաղաքական դրույթների հետևանքով նա չկարողացավ ելք գտնել ստեղծված դրությունից: Միայն մի հակայական թռիչքի միջոցով կարող էր նա փոխել իր ուղենիշերը, վերանայել իր արժեքները—այդ նրան չհաջողվեց իրագործել: Նրա մեջ կուտակվում էր լուրջ, սակայն նրան պակասում էր գործնական բոլորքի հասարակական հիմքը: Արուստանի ողբերգական վախճանը պատմական անհրաժեշտությամբ նախապատրաստեց մեծ տրիբուն Նալբանդյանի փայլուն գործունեությունը: Նալբանդյանը հանգեց այն եզրակացություններին, որոնց, պատմության բնութամով, Արուստանը չէր կարող հանդել:

Արուստանի մարդասեր միտքը չանդրադարձավ այն հակասականությանը, որ գոյություն ուներ ցարական կառավարության և ռուս ժողովրդի ու Թուսաստանի այլ ժողովուրդների միջև, նրա սիրտը ցավում էր բազմաբախտ ժողովրդի ճորտական վիճակի մեջ գտնվելու առիթով, նա հատկապես շեշտում էր, որ ճորտը նույնպես մարդ է, որ նրա կրծքի տակ ևս մարդկային սիրտ է բաբախում: Մարդասիրական դժգոհություններով տոգորված նա ևս կարող էր ասել իր մասին՝ «Եվ իմ դաժան դարում երդիլ եմ ես ազատություն և զուրկ հանուն ընկածների»—այս էր նրա սահմանագիծը: Հայ ազգի կազմավորման արշալույսին մեր մեծ լուսավորիչը ոչ սոցիալական հիմք ուներ, ոչ էլ հոգեբանական նախադրյալներ առաջ քաշելու և իր ամբողջ հասակով զիտակցելու այն, որ հայ ժողովրդի լուսավորությունը, կուլտուրական դարձացումն անխղիճորեն շաղկապված են ռուսական կայսրության ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի կողմից ցարիզմի դեմ ուղղված պայքարի հետ, որի մեջ հայ ժողովուրդն իր մասնակցությունը պիտի ցուցաբերեր ձեռք-ձեռքի սոված մյուս ժողովուրդների հետ:

Դարերի միջով անցնելով, տրորված ուրիշի ոտների տակ, մերթ էլ իր կորացած մեջքն ուղղելու հերոսական փորձեր կատարելով, իր հուսալի հա-

յացքը հառած ապագային՝ հայ ժողովուրդը ձգտում էր ձեռք բերել իր ազատութիւնը: Կանգնած լինելով հայ ժողովրդի պատմութեան դարագլխին, Աբովյանը հնարավորութիւն ունեցավ միայն հիմնավորելու և արժեքավորելու քաղաքական արժեքն այն առաջին քայլերի, որոնցով հայ ժողովուրդն սկսեց պատմութեան կողմից իրեն առաջադրված այդ նպատակն իրագործելու երթը:

Մեծ լուսավորիչը միանգամայն ճիշտ ըմբռնեց և առաջինը մեր գրականութեան մեջ իր ամբողջ հասակով ծավալեց քաղաքական այն որոշիչ հարցը, որ ուստական փրկապետութիւնը պատմական մեծ բարեբախտութիւն էր պարսկական ծանր լծի տակ հալ ու մաշ լինող հայ ժողովրդի համար, որ մեր ժողովուրդը պետք է ապահովեր իր հետագա զարգացումը՝ ներառված Ռուսաստանի ժողովուրդների քաղաքական-հասարակական կյանքի շրջանակներին մեջ: Հայ ժողովրդի պատմական բախտի համար ոչ պակաս նշանակութիւն ունեցավ առաջին հիմնական հարցից բխող այն սկզբունքի կիրառումը, որ նա կարող էր իր ազգային կոչութեան շինարարութեանը ձեռնամուխ լինել՝ անմիջապէս կապակցված և անջնջութիւն կրելով ուստական-մարդասիրութեամբ ու ազատազրական գաղափարներով ստեղծված մեծ կուլտուրայից:

Հայ ժողովուրդը հաստատ մնաց իր մեծ դավալի ավանդներին. իր պատմական կյանքի բարձր աստիճանի վրա նա դարգացրեց, կոնկրետացրեց այդ ավանդները՝ հասուն բովանդակութիւն հաղորդելով նրանց: Այն, ինչ չէր կարող կռահել Աբովյանը, միս ու արյուն ստացավ մեր ժամանակներում: Հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազատութիւնը՝ պայքարելով մեր լայնածավալ երկրի ժողովուրդների, իր մեծ բարեկամ ոռոս մեծ ժողովրդի հետ միասին, ստանալով նրա եղբայրական օժանդակութիւնը:

Այժմ, երբ Մովսէսական մեծ երկրի բոլոր եղբայրական ժողովուրդները, ոռոս մեծ ժողովրդի ղեկավարութեամբ, մահու և կենաց կռիվ են մղում մարդակեր գազանի ոհմակների և նրա վտաւնների խաժամովի դեմ և իրենց հարվածներով արնաքամ անում նրանց, այժմ, երբ ժողովրդասպան թշնամուն ոչնչացնելու հոյակապ դրոժին մասնակցելը սրբազան պարտականութիւն է սովետական բոլոր քաղաքացիների համար—հայ ժողովուրդն է՛լ ավելի մեծ սիրով պետք է հիշի իր անցյալի ամենապայծառ դիմքերից մեկին—բոցավառ հայրենասեր, ժողովուրդների եղբայրութեան քարոզիչ, մարդկայնութեան ու ազատութեան երգիչ Աբովյանին:

Արամ Ինձիկյան

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԱՇԼՅԱՆԻ ԵՐԳԵՐՈՒՄ

Մ. Պեշիկթաշլյանը մեկն է անցյալ դարի 60-ական թվականների մեր այն բանաստեղծներից, որոնց ստեղծագործության մեջ ցայտուն արտահայտություն է ստացել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Հայրենիքի սիրը Պեշիկթաշլյանի ստեղծագործության հիմնական մոտիվը, նրա քնարի ամենաուժեղ լարն է: Եվ ոչ միայն իր երգերում, այլև պատմական ողբերգություններում ու ճառերում բանաստեղծի լավագույն խոհերն ու հույզերը պատվում են հայրենիքի շուրջը:

«Հայրենիք, չիկա ասիկ ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը, — ասում է Մ. Պեշիկթաշլյանն իր ճառերից մեկում, — հայրենյաց սերը սաստիկ բոց մըն է, որ կըօրբօքի ազգասիրին սրտին մեջը, որով կմաշի անիկա, չի կընար հանդարտիլ, պատեհավոր առիթ մը կսպասե ան սրտին միջի վառած բոցը դուրս թափելու, ու աս կըրակը չի մարիր բայց միայն մահվամբ»:

«Ճշմարիտ ազգասերը հայրենիքին պաշտպանությունը ու անոր փառքը ու պարծանքը պահելու համար իր կյանքն ալ բանի տեղ չի դնել, որով և հոժարությամբ գոհ կըլլա անոր: Հայրենասիրին սիրտը անհաղթելի է. չիկա մեկ սոսկալի դժբախտություն մը, որ կարենա ընկնել անոր հաստատուն ու ամուր միտքը և հոգին»¹:

Լինելով Դևոնդ Ալիշանի աշակերտը, Մ. Պեշիկթաշլյանն սկզբնական շրջանի իր գրաբար բանաստեղծություններում գերազանցապես երգում է Հայաստանի փառավոր անցյալը, ողբում ավերված մայրաքաղաքներն ու մեռած արքաներին: Ծիշտ է, նրա այս կարգի բանաստեղծություններն ընդհանուր և վերացական բնույթ են կրում, բայց դրանք գրված են հայրենասիրական ջերմ շնչով, ազգային արժանապատվության և հպարտության բարձր զգացմունքով, ինչպես օրինակ՝ «Հրավեր ի մարտ Խոսրովու մեծի», «Դյուցազունք հայոց», «Ի նահատակություն Վարդանանց» բանաստեղծությունները: Վերջին բանաստեղծության մեջ Պեշիկթաշլյանը մեծ խանդավառությամբ երգում է հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական ինքնուրույնության համար մղված ազատագրական պայքարի ամենանշանավոր հերոսներից մեկին՝ Վարդան Մամիկոնյանին:

Ահա արին հարյավ Վարդան
Դըռույթ ի դաշտ տալ փառաց.

¹ Մ. Պեշիկթաշլյան — «Քերթվածներ և ճառեր», էջ 141—142:

Գուգարահաղթ քաջացն ի կռիվ,
Որոտընդոստ ձայն գոռաց...
...Ահա ըզսուրն շարժյաց Վարդան
Եվ սյավ անդունդք սարսեցին:

Բնության և սիրո նրբանմազ երգերում էլ Մ. Պեշկեթաշլյանը շեշտված հայրենասեր է: Հայրենասիրական դորեղ դգացմունք է արտահայտված «Դարուն» սքանչելի բանաստեղծության մեջ.

... Թեպետ թոչնիկն ու հովն հայոց
Ավերակաց շրջին վերո,
Թեպետ պզտոր վըտակն հայոց
Նոճիներու մեջ կը սողա,
Նոքա հառնչք են հայրենյաց,
Նոքա չերթան սըրտես ի բաց:

Գուևի ծավի աչքերը և Ալեմտաղի փափկաթև զևիյուրը երգող բանաստեղծի սրտում ամենամեծ տեղը բռնում է հայրենիքի սերը. հենց որ հընչում է մարտի փողը, նա հրաժեշտ է տալիս սիրուն և զենք է վերցնում՝ հայրենիքն օտարի լծից ազատելու համար.

Մնացեալ բարյավ, սէր իմ, սեր,
Հրավեր մարտից որոտաց՝
Թե չեմ քաջաց նս ընկեր,
Չըկն բաժին ինձ փառաց:
... Եղբայրադավ չէ նախանձ,
Որ բորբոքյալ հիս վտտի,
Ի սուրբ հողոց հայրենյաց
Բառնամ ըզլուծ օտարի:

Բնության բոլոր ձայներից, նույնիսկ սիրած կուևի ձայնից էլ զորեղը հղբայրության ձայնն է — «Եղբայր եմք մեք»: Պեշկեթաշլյանի այս, ինչպես նաև հայրենասիրական մյուս բանաստեղծությունները խաշոր դեր են կատարել անցյալ դարի 60-ական թվականներին մեղանում աղգային ինքնագիտակցության արթնացման և քաղաքական մտքի կազմակերպման գործում:

Անցյալ դարի 60-ական թվականները մեր իրականության մեջ աղգի կազմակերպման և աղգային ինքնագիտակցության մշակման ամենաեռուն տարիներն էին: Աղգային միասնականության գաղափարն ամենաառաջնակարգն էր այդ շրջանում: Եվ ահա, ժամանակի ոգու ամենանուրբ արտահայտիչներից մեկը՝ Մ. Պեշկեթաշլյանն իր այդ նշանավոր բանաստեղծություններից մեջ աղգի զանազան կրոնական, ազանգալորական հատվածներին միանալու կոչ է անում: Միությունն ուժ է. միասնական պայքարով, միասնական աշխատանքով միայն կյանք կառնեն «հայոց դաշտերը».

... Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարյաց հերկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր:

Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Դան զանձկալի Եղբայր անուն:

Մ. Պեշիկթաշլյանի հայրենասիրական երգերի պսակը կազմում են նրա «Զեյթունի երգերը», որոնցով նա հռչակվեց, և որոնք, անպայման, հանդիսանում են բանաստեղծի գրական փառքը:

Այդ երգերն անմիջական արձագանքն են Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

Զեյթունցիների 1862 թ. օգոստոսի 2-ի հերոսամարտը և հաղթանակը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ամենապայծառ, ամենալուսավոր էջերից մեկն է:

Հայկական Կիլիկիայի լեռներում ամրացած հայ ժողովրդի մի հատվածը — զեյթունցիները երկար տարիներ պահում էին իրենց կիսանկախ գոյությունը, աղատ մնալով սուլթանների և նրանց բազմաթիվ համահարգների կամայականություններից, որոնց ենթակա էր Թյուրքիայի մյուս մասերում ապրող ժողովուրդը: Ճիշտ է, տարեկան մի խոշոր գումար նրանք վճարում էին սուլթանին, բայց վայելում էին որոշ իմաստով ինքնուրույնություն: Սուլթանները մի քանի անգամ փորձում են ընկճել և ճնշել զեյթունցիներին, նրանց էլ դնել այն վիճակում, ինչ վիճակում գտնվում էին մյուս գավառների բնակիչները, բայց սուլթաններին այդ չի հաջողվում, որովհետև զեյթունցիները, ամրացած իրենց անառիկ լեռներում, անօրինակ հերոսություն արժանանում են մղում սուլթանական զորքերին:

1862 թ. օգոստոսի 2-ին Ազիզ փաշան 40 հազար կանոնավոր ու անկանոն զորքով պաշարում է Զեյթունը՝ որոշած լինելով միանգամ ընդմիշտ նվաճել և հնազանդեցնել անհնաղանդ ու ապստամբ զեյթունցիներին: Զեյթունի ազատասեր և քաջարի ժողովուրդը հերոսական դիմադրություն է ցույց տալիս՝ չցանկանալով զրկվել ազատությունից և ստրկանալ: Զեյթունի պաշտպանությունը մասնակցում է ամբողջ ժողովուրդը՝ նույնիսկ կանայք ու ծերունիները՝ ով ինչով և ինչպես կարողանում է:

Զեյթունի ազատասեր ժողովուրդն այդ մարտերում ցույց է տալիս հերոսության և անձնվիրության բազմաթիվ օրինակներ: Մարկոս Թաշճյան ազգանունով մի երիտասարդ, արհամարհելով իր կյանքին սպառնացող բացահայտ վտանգը, սպանում է թշնամու թնդանոթաձիգին:

«Զեյթունի անցյալն և ներկայն» իր գրքում Զեյթունցին այդ դեպքը պատմում է այսպես.

«Այստեղ երևան եկավ ճշմարիտ հայրենասիրության և անձնվիրության այն վսեմ ոգին հանձին Մարկոս Թաշճյանի, որ հազվագեպ իրողություն մը չէ սակայն զեյթունցոց համար: Սա մոտենալով ավագ քահանա տեղ Դադարին, որ կնախագահեր բանակին մոտ հսկում կատարող եկեղեցական դասուն, հայտնեց անոր յուր խորհուրդը, որ հղացած էր շուտով վերջ տալու համար այս վտանգավոր պատերազմին:

— Տեղ հայր, պիտի երթամ թնդանոթաձիգն սպանեմ, ասաց նա հանձարտությունով:

— Անմիտ, աղադակեց քահանան, մեռնելու կերթաս:

— Այո, պատասխանեց քաջասիրտ Մարկոսը. գիտեմ թե պիտի մեռնիմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեմ:

Եվ իսկույն անհետացավ վեհագի Մարկոսը. մերթ սողալով, մերթ քալելով՝ ամենայն զգուշությամբ մոտեցավ Թնդանոթաձիգին, քաշեց հրացանի բլթակը և թալազվոր ձգեց մարդը հրամանատար Ազիզ փաշայի ոտքերուն տակ. Թշնամիի զնդակ մ'ալ ղինքը տապալեց, բայց նա արդեն հասած էր յուր նպատակին¹:

Ազիզ փաշայի բազմահազար բանակի արշավանքը վերջանում է զեյթունցիների կատարյալ հաղթությամբ: Ազիզ փաշան փախչում է՝ Զեյթունի լեռներում թողնելով մի քանի հազար սպանված և զեյթունցիներին ահաբեկելու համար բերած իր երկու թնդանոթը:

Ժողովուրդն իր հաղթության առթիվ հյուսում է մի երգ, որի մեջ ծագում է Ազիզ փաշայի գոռոզությունն ու վախկոտությունը և նրա 40 հազարանոց բանակի խայտառակ պարտությունը: Ահա այդ երգը, որ Զեյթունցին բերել է իր վերահիշյալ զրքում.

Հազար ութ հարյուր վաթսուն երկուքին,
Հունական օգոստոս ամսուն երկուքին,
Զերքեզք ջարդվեցան Գըրգընի քյոփրին.
Դիակաց կույտերը թռչունները վախցրին:

Ազիզ փաշան եկավ Թնդանոթ լարեց,
Քառսուն մեկ ուսմբ նետեց, մի էշ գլտորեց.
Թաշյանը թոփչին զարկավ տապալեց,
Փաշան ալ սոսկումեն գետին փռվեցավ:

Փաշային ծունկերուն կապը քակվեցավ,
Վախ ու սարսափեն լեղին պատռեցավ,
Զերքեզաց գլուխը մեկեն ճգմվեցավ.
Քառսուն հազար զորք էր՝ իսկույն ցրվեցավ²:

Զեյթունի ապստամբությունն ու փայլուն հաղթանակը, Զեյթունի ազատասեր մարտիկների անձնվիրությունն ու հայրենասիրությունը մեծ ոգևորություն են առաջացնում ժողովրդի մեջ և հատկապես հայ դեմոկրատական ինտելիգենցիայի շրջաններում:

«Այն տարին, — պատմում է Սրբուհի Երիցյանը, — Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վերա. ամենայն ոք Կիլիկիան ունեւ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանդանակությանց. ընկերություններ էին կազմվում, թանգարաններ և դպրոցներ հաստատվում և վարժապետներ ուղարկվում Կիլիկիա»³:

Մ. Պեշիկթաշյանը, որ լարված ուշադրությամբ և հափշտակությամբ հետևում էր Տավրոսի լեռներում կատարվող անցքերին, զեյթունցիների հերոսություններով ներշնչված, դեպքերի թարմ տպավորության տակ գրում է իր «Զեյթունի երգերը» — «Հայ քաջորդին», «Մահ քաջորդվոյն», «Թաղումն քաջորդվոյն» և «Հայ քաջունին» բանաստեղծությունները:

¹ Զեյթունցի — Զեյթունի անցյալեն և ներկայեն», Ա. և Բ. մաս, 1911 թ., էջ 86—87:

² Նույն տեղ, էջ 89—90:

³ Սրբուհի Երիցյան — «Իմ ծանոթությունը Մկրտիչ Պեշիկթաշյանի հետ», «Փորձ», 1877 թ., Ա. տարի, № 4, էջ 193:

Իր այդ երգերում Մ. Պեշիկթաշլյանը վերացական հայրենասիրությունը փոխարինում է ռեալ և մարտական հայրենասիրությամբ՝ երգելով Զեյթունի հերոսներին — իրենց աշխատանքը, պատիվը ու ազատությունը քաջարար պաշտպանող ազատասեր ռամիկներին:

«Զեյթունի երգեր» շարքի առաջին բանաստեղծությունը «Հայ քաջորդի»-ն է: Ո՛չ փոթորկալի ծովը, ոչ աստղալից երկնակամարը, ոչ բնությունն իր պայծառ զարդերով, ծաղիկները և զեփյուռի ժպիտներով, ոչ մոր սփռփանքը և ոչ էլ սիրունու «անուշ գգվանքը» չէ զեյթունցի քաջորդու ուղածը:

Դեռ ի՞նչ կուզես, ոհ, մի՛ ծածկեր...

— Կուզեմ վառող ու գնդակներ —

լինում է երիտասարդի պատասխանը: Ի՛նչ խոսք՝ վառողն ու գնդակները նա գործադրելու է մի վսեմ նպատակի՝ օտար նվաճողներից իր հայրենիքի ազատությունը պաշտպանելու համար: Այդ սրբազան պայքարում էլ հայ քաջորդին զոհվում է, ինչպես տեսնում ենք «Զեյթունի երգեր» շարքի երկրորդ բանաստեղծության մեջ, որ կրում է «Մահ քաջորդվույն» վերնագիրը: Այս բանաստեղծության մասին Սրբուհի Երիցյանն իր հիշողություններում պատմում է հետևյալը.

«1862 թվի վերջերը, Զեյթունի անցքերից անմիջապես հետո, այդ երկրի նշանավոր տեր Մովսես քահանան, որ երեցփոխանություն պատռնով Պոլիս էր եկած, մեր տանը հյուր եղավ. նրա սրտաշարժ պատմությունները լսելու համար մեզ մոտ հաճախող երիտասարդների թիվը օրեցօր շատանում էր: Մովսեսի հետ ստեպ հաճախող ե ժամերով տեր Մովսեսի մոտ նստող Պեշիկթաշլյանն էր: Մի սրտաշարժ տեսարան էր հայ մարդու համար, երբ տեր Մովսեսի արած զեյթունցոց նկարագրությունը Պեշիկթաշլյանի խոշոր աչքերը արտասովոր կլթցնեին և հետևաբար այդ երկու հայասեր անձանց հոգվույն կրքերը կգրգռեին: 1863-ի սկզբում, ձմեռային մի ցուրտ երեկո էր, տեր Մովսեսի հետաքրքրական վեպերը գրաված էին չորս կողմը խմբված երիտասարդների ուշադրությունը. նա պատմում էր մի սիրտ ճմլող անցք, թե ինչպես մի հուսահատ մայր, մի խեղճուկ հայ կին, գիշերային լուռության մեջ, պատերազմի դաշտի վերա փնտրում էր իր միակ որդվույն դիակը, որ մի օր առաջ մեծ ջարդ տված էր իր հայրենյաց թշնամյաց: Խորին լուռությամբ և մորմոքած սրտերով լսում էինք այդ պատմությունը. տպավորությունը շատ մեծ էր... Նույն գիշերը հյուրերից մի քանիսը մնացին մեր տանը քնելու, որոնց թվումն էր նաև Պեշիկթաշլյանը: Մյուս օրը, նախաճաշիկի ժամանակ, Պեշիկթաշլյանը կարդաց մի կտոր թղթի վերա մատիտով գրած հետևյալ բանաստեղծությունը, որ գրած էր տեր Մովսեսի առաջի գիշերվա արած տխրագին պատմության ազդեցության ներքո: Ահա բանաստեղծի հոգու զգացմունքը»¹:

Այնուհետև Սրբուհի Երիցյանն ամբողջությամբ մեջ է բերում Պեշիկթաշլյանի «Մահ քաջորդվույն» բանաստեղծությունը:

«Մահ քաջորդվույն» բանաստեղծության մեջ, ինչպես նաև Մ. Պեշիկ-

¹ Անդ, էջ 191—193: Տե՛ս նաև՝ Զեյթունցի — «Զեյթունի անցյալն և ներկայն», էջ 95—96:

Թաշկանի դեյթունյան շարքի բոլոր երգերում արտահայտված է ջերմաշունչ հայրենասիրություն:

Անկման, հուսահատության, ողբի և ոչ մի նշույլ մենք չենք նկատում «Մահ քաջորդվուն» բանաստեղծության մեջ: Այստեղ պատերազմը չի պատմվում, այլ ներկայացվում է պատերազմի դաշտը ճակատամարտից հետո: Զեյթունցի հերոսն ընկած է՝ ծանր, մահացու վիրավորված: Նա գգում է իր մեռնելը, սակայն վերջին լուպիններին մահվան տխուր խոհերը չեն ստվերում նրա ճակատը, և ոչ մեռնողի հառաչանքներն են լսվում նրա բերանից: Արյունահոս վերքի ցավերն ու մահվան միտքը տեղի են տվել հայրենիքի սիրտ և հաղթողի բարձր տրամադրություն առաջ: Զեյթունցի մարտիկը մեռնում է հերոսավայել՝ հաղթանակի ժպիտը դեմքին:

Մըռնչեցին ինչպես վիշապ

Ու մեր վերա հարձակեցան.

Ո՛վ հայրենիք, ի հուր, ի բոց

Քո համար մեր սիրտք վառեցան.

Կարմիր ներկան ձորք մեր՝ ու դուն

Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Յուրաքանչյուր տան վերջում կրկնվող տողը՝ «Ուրախ լուրեր տար ի Զեյթուն» բառերը՝ մեռնող հերոսի այդ վերջին պատգամը՝ բանաստեղծությանը հաղորդում է օպտիմիստական, մարտական բարձր տրամադրություն:

Մեռնող մարտիկն անսահման սիրով սիրում է իր հայրենիքը, հայրենի հարազատ հողը, որին փարում է նա վերջին շնչում՝ դյուցազնական իր բազուկներով: Ամբողջ բանաստեղծությունը մեռնող քաջորդու վերջին խոսքն է՝ ուղղած իր մորը, որը թևե չի խոսում, բայց որի ներկայությունն ավելի քան զգալի է: Նա իր հերոս որդուն արժանի մայր է: Նա է իր որդուն հայրենասիրության և անձնվիրության ոգով դաստիարակել դեռ օրորոցում. հենց այդ մասին է հիշեցնում քաջորդին մորը՝ խնդրելով, որ նա «անլաց աչոք» դիտե որդու «արյունահոս վերքերը».

«Նորեկ որդվույս կենացն արև

Ձեզի համար փայլի, հայեր».

Այսպես այնժամ դու կերգեիր՝

Օրորոցիս նրստյալ քովեր.

Անոնց համար շիջավ՝ և դուն

Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:

Հայրենասեր մարտիկի թաղումն էլ («Թաղումն քաջորդվուն») կատարվում է հերոսավայել — անաղմուկ, առանց ողբերգի և ծիսակատարության.

Ո՛չ փող զարկինք, ոչ արձագանք լեռնասույզ

Սարեխար հարաշըշուկ տարին լուր.

Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ,

Երբ պատանվուն բացինք մըռայլ փոսին դուռ:

Դիշերվան մունջ ըստվերներ շուրջ կային,

Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք.

Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր սլատեր ըզգաշտ, բլլուր և երկինք:

Պետք չէր դադաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցվեր ազատորդի Զեյթունցին.
Նա ետ մարտին կարծես հոգնած կըհանգչեր,
Ու վերաբերուն կարմիր բավեր յուր անձին:

Ազատորդի զեյթունցու թաղմանը նվիրված այս բանաստեղծությունն արտահայտում է հերոսական հանդիսավորություն և վեհություն, որն այդ թաղման ներքին, գաղափարական բովանդակության մեջ է կայանում և ոչ չքեղ ծիսակատարություն: Թագվողն աշխարհակալ չէր և ոչ բարձրաստիճան մի զինվորական, այլ հասարակ մի զինվոր, հայրենիքի ազատության համար հաղթական մարտում ընկած մի ռամիկ երիտասարդ. նրա թաղմանը փողեր չեն հնչում և ոչ թնդանոթներ որոտում. չեն երգվում «ողբոց երգեր սրտահույզ». հերոսի զերեղմանը հրացանի կոթով են փորում. ջահերի փոխարեն լուսինն է սփռում իր սառը լույսը. չկա դադաղ. պատանքի փոխարեն մարտիկի դիակը փաթաթում են հենց իր արյունաներկ կարմիր վերաբերուն մեջ. պերճախոս ճառերի տեղակ բոլորը միաբերան մի խոսք են միայն մրմնջում:

Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար...

Մի կարճ խոսք, որ այն խորիմաստ միտքն է պարունակում, թե՛ հայրենիքի ազատության համար մահը մահ չէ, այլ անմահություն:

Զեյթունի ապստամբության ներշնչումով Պեշիկթաշլյանի դրած չորրորդ բանաստեղծությունը «Հայ քաջունին» է, որ «Հայկունին» վերնագրով և առանց ստորագրության տպագրվել է «Փարիզ» կիսամսյա լրագրում 1863 թ. մարտին՝ խմբագրության այսպիսի ծանոթությամբ. «Հետևյալ գեղեցիկ երգը, որ մեր երիտասարդ բանաստեղծներն մին գրած է Զեյթունի վերջին անցից վերա, հաճությամբ կմատուցանենք մեր արգո ընթերցողաց: Իսկ արգո հեղինակիս անունը չհայտնելուս պատճառն այն է միայն, որ չենք գիտեր, թե ինքը կուղե»:

Այս բանաստեղծությամբ Մ. Պեշիկթաշլյանը տվել է Զեյթունի ազատագրական շարժմանը մասնակից հայ կնոջ կերպարը:

Հայրենիքի սիրո սրբազան զգացմունքն ամբողջովին համակել է նաև քնքույշ հայ աղջկա սիրտը.

Օրհնյալ անմահ դու Քաջություն,
Պըսակ լանջաց Ազատության,
Որ զհրեղեն վառես զվարթուն
Եվ զսիրտ քնքույշ հայ աղջկան:

Նարդիգ և նունուֆար փնջելու համար չէ՛ հայկունին լեռները բարձրացել. ոչ. զեյթունցի քաջերին նա մարտի է կոչում՝ հայրենիքի ազատություն ու պատիվը պաշտպանելու համար:

Ազատ Զեյթունում հայ աղջիկը մանկուց հայրենասիրության ոգով է դաստիարակված. նրա մատաղ սիրտն այլ զգացմունք դեռևս չի ճանաչում. նա փայփայում է միմիայն հայրենիքի սերը. նա դավանոք համբուրում է սառն պողպատը՝ ազատության գնքը:

Նա այլ զըզվանք և այլ համբույր՝
 Կուսան անբիծ՝ դեռ չըզիտեր,
 Երախայրի սրտին ի բույր
 Ցուլաց միայն ազգին յուր սեր:

Եվ անհա նա զեյթունցի մարտիկներին խրախուսում է, ոգևորում.

... Հառաջ, մոտ կա ժանտ թըշնամին,
 Զինք վանեցեք կոտորածով:

Հայկունին է, տեսե՛ք ահա
 Կրակներ թափին յուր աչքերեն.
 Հայկունին է, որ թըռչի դա,
 Ինչպես հրեշտակ ըսպառազեն:

... Հայկունին է, կտրիճ եղեք,
 Հայկունին տա խրախույս հորդոր,
 Ժանտից վերա հուր անդացեք
 Մինչև մոխիր դառնան բոլոր:

Ժանտ թշնամու դեմ հաղթություն տանելուց հետո Զեյթունի հերոսների հետ վերադառնում է հայ քաջունին՝ գլուխը դափնիով պսակած: Մ. Պեշիկթաշլյանի այս բանաստեղծությունը ևս, նախորդների նման, զրված է հայրենասիրական ջերմ շնչով և մարտական բարձր տրամադրությամբ:

Մ. Պեշիկթաշլյանի հայրենասիրական երգերը սիրվել և ասանամյակներ շարունակ երգվել են սերունդների կողմից՝ հայրենասիրության և անձնվիրության վսեմագույն գաղափարներ սերմանելով երիտասարդության մեջ: Միանգամայն իրավացի է Մաթեոս Մամուրյանը՝ Պեշիկթաշլյանին անվանելով «Թյուրքիո հայոց Պերանժեն», որ «բռնության մեջ՝ ազատության աշակերտ եղավ»¹: Հայրենասիրության հետ միաժամանակ, Մ. Պեշիկթաշլյանն իր լավագույն երգերով ժողովրդին ներշնչել է լավատեսությամբ և ապագայի նկատմամբ, միշտ համոզված, որ՝ «Գա արշալույս»:

Ո՛հ, ինչվան էրբ հաճույք և սեր
 Առանց սուգի պիտի չըլլան:

Եվ դու Մեհեկ, կուլա՛ս անհույս.
 Ո՛հ, ո՛չ, զընա՛... գա արշալույս:

Եվ այսօր, երբ ուս մեծ ժողովրդի հետ միասին հայ ժողովուրդն էլ ելել է հայրենական մեծ պատերազմի, Պեշիկթաշլյանի երգերը նոր թարմությամբ և ուժով են հնչում՝ բորբոքելով մեր մեջ հայրենասիրության սրբազան հուրը:

¹ Վրույր (Մ. Մամուրյան) — «Հայկական համականի», Զմյուռնիա, 1872 թ., էջ 213—217:

С. Т. Еремян

Заметки к тексту „Хроники Сумбата“

В „Хронике Сумбата“ летописец, говоря о походах императора Ираклия I (610—641 г.г.) в Персию и осаде последним города Тбилиси (в 627 г.), пишет: და წარვიდა ბერდუჯს და დადგა გულსა სოფიოსასა და აღმართა ჯვარი ქვისა და დადგა საფუძველი წმიდის ღვთის შობილის ეკლესიისა და აღასრულა გუმბათი მისი¹. В приведенном тексте для исследователей оставалось темным и загадочным слово სოფიოსასა. Издатель грузинского текста „Хроники Сумбата“ и его русского перевода Е. С. Такайшвили предполагал, что სოფიოსასა есть искажение слова სოფლისასა, и в издании того же текста, в „Картлис Цховреба“ по списку царицы Марии, в примечании к слову სოფიოსასა пишет: „должно быть: სოფლისასა“ (უნდა იყოს: სოფლისასა)². На основании последнего Е. С. Такайшвили фразу დადგა გულსა სოფიოსასა по-русски переводит: „остановился посреди деревни“³. Подобным же образом поступил издатель вахтанговского текста „Картлис Цховреба“ З. Чичинадзе. Он слово სოფიოსასა заменил словом სოფლისასა и интересующую нас фразу читал: დადგა გულსა სოფლისასა, что по-русски переводится „остановился посреди деревни“⁴.

Чтобы выяснить это темное для нас место, обратимся к самому тексту. В тексте летописец сообщает о походе императора Ираклия I, через вассальную Сасанидской Персии Картлию, в Иран. На пути этого похода лежал один из опорных пунктов Сасанидов в Грузии—город Тбилиси, который подвергался осаде со стороны союзных византийских и хазарских войск. В тексте говорится, что Ираклий I осадил крепости Кала—цитадели города Тбилиси—предоставляет хазарскому хакану Джибгу, а сам направляется в сторону Гардабани, к правителю Албании гесп. Арана, эриставу Вараз-Гагели (т. е. проис-

¹ ქართლის ცხოვრება, მარიამ დედოფლის ვარიანტი, ე. თაყაიშვილის რედაქციით, ტფილისი, 1906, გვ. 340—341; см. также: ე. თაყაიშვილი—სამი ისტორიული ქრონიკა, ტფილისი, 1890, გვ. 46—48.

² Ibid, стр. 340.

³ Е. Такайшвили—Источники грузинских летописей. Три хроники („Жизнь и известие о Багратидах, наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Лавида“), стр. 128.

⁴ См. ქართლის ცხოვრება, გამ. ზ. ჭიჭინაძისა, ტომი I, ტფილისი, 1897, გვ. 240.

ходящему из местности Гаг¹), гесп. Вараз-Григолу, в местность Ху-зашен. Здесь, согласно летописи, император „крестил Вараз-Гри-гола и весь его народ“. Из местности Хузашен, в стране Гардабани, Ираклий „отправился в (страну) Бердуджи и остановился посреди Со-фиоса, воздвиг каменный крест, положил основание церкви пресвя-той богородицы и кончил постройку ее купола“.

Чтобы расшифровать загадочное название „Софиос“, надо уточ-нить географическую среду указанных местностей. В „Картлис цхов-реба“ о местоположении страны Гардабани говорит Леонти Мровели в своем „Жизнеописании царей“ (ცხოვრება მეფეთა). По его описанию, „удел Гардабоса“, одного из этнархов картвельских племен, прости-рался в следующих пределах: „с востока—река Бердуджи (ныне Де-беда), с запада—город Гачиани, с юга же—вышеупомянутая гора (т. е. пограничная с Арменией горная цепь—Сомхетские горы) и с севе-ра—Мтквари (т. е. р. Кура)“².

Там же в другом месте сообщается, что Гардабани простирается от реки Бердуджи до городов Тбилиси и Гачиани³). Река Бердуджи, называемая в армянских источниках *Բերդաճուղ*, является ныне р. Де-беда; так называлось, повидимому, нижнее течение ее; верхнее тече-ние было известно под названием Дзорагет (*Չորագետ*). Упоминаемый далее город Гачиани, иначе Цуртав, согласно проф. Л. М. Меликсет-Беку, находился на месте нын. сел. Нахидурн-Арухло⁴). С северо-востока Гардабани граничит с рекой Курой и районом г. Тбилиси, а с юга—с горной цепью Лалвар. В указанных пределах страна Гар-дабани совпадает с нын. районом Борчалу Грузинской ССР.

Однако в указанном тексте речь идет о той части страны Гар-дабани, которая находилась в пределах Албании—Гардман (*Գարդման*), в армянской передаче, и Джардаман—в арабской передаче⁵). Область Гардман отделялась от грузинской Гардабани нижним течением р. Бердуджи и крепостью Хунан (иначе: hУнаракерт), находящейся у впа-дения р. Бердуджи (нын. Дебеда) в Куру, нын. пункт Синих-кепри, или Гатехили хиди. Таким образом, император Ираклий из Тбилиси через грузинское Гардабани направился в албанский Гардабани, или Гардман, что падает на район нын. Казахского округа Азербайджан-ской ССР.⁶ Ираклий из Гардабани—Гардмана отправляется в долину

¹ Гаг—известная крепость в средние века в районе нын. г. Казах.

² См. ივ. ჯავახიშვილი—ქართველი ერის ისტორია, წ. II, ტფილისი, 1913, გვ. 286.

³ Ibid.

⁴ См. მედიკეთ-ბეგი—თრიალეთ—წალკის მატიანეები კულტურის ნაშთებისა და ტოპონიმების შესწავლისათვის (ზრამკის მშენებლობის გამო), в сборнике: მარტისტიკული ენათ-მეცნიერებისათვის. აკად. ნ. მარისაძის მიძღვნილი საიუბილეო კრებული, ტფილისი, 1934. გვ. 41—43.

⁵ Баладзори—Книга завоевания стран. Пер. П. К. Жузе, Баку, 1927, стр. 13.

⁶ См. С. Т. Еремян, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana (Вестник древней истории. 1939, кн. 1, стр. 84—86).

р. Бердуджи, по имени которой и называется долина—Бердуджи, что соответствует округу Дзора-пор (*Զորափոր*) армянских источников(нын. Алавердский район Армянской ССР.) Именно в этой долине Бердуджи—Дзорагета (нын. Дебеда) должны искать местность, носящую загадочное название „Софиос“.

Таким образом, из текста выясняется путь, по которому прошел Ираклий:—Тбилиси, крепость Хунан, Казахский район, переправа через р. Дебеда и нын. Алавердский район—в пункт „Софиос“. Из Казахского и Баранинского районов наиболее удобным переходом через р. Дебеду является местность около селения Чочкан, через которую проходил торговый путь, нашедший свое отражение также в средневековом армянском итинерарии. Указанный район находился в округе Цопо-пор (*Շորփոր*) армянских источников. Последний обнимал собою пространство от ахталских медных рудников до сел. Нахидури. В указ. районе—между сел. Шаумян (Шулавер) и р. Дебеда поныне указываются развалины крепости, упоминаемой также в „Географии Грузии“ царевича Вахушти—Цопа (*წოპა*)¹. Маститый ученый в главе „Описание Сомхитий“ пишет: „а ниже Ахталы находится ущелье Хожорнии. В Хожорнии находится церковь скуполом, а в Цопа имеется малая крепость“². По имени этого пункта Цопа и одноименного притока р. Дебеда—Бердуджи назывался весь район Цопо-пор (*Շորփոր*, герср. *Շոփփոր*), что буквально означает „Ущелье Цопа“. Название это сохранилось только в армянских источниках, в грузинских же известно только название крепости Цопа. Если Ираклий из Гардабани—Гардмана перешел в долину р. Дебеда—Бердуджи, где он „остановился посреди „Софиоса“ и „положил основание церкви“, то он мог быть лишь в районе нижнего течения р. Дебеда, что совпадает с территорией округа Цопо-пор. Из сказанного выше нетрудно догадаться, что между названиями „Софиос“ и Цопа есть какая-то связь. Это станет понятным, если мы название *წოპა* : *Շոփ* передадим в греческой транскрипции: *Σοφίος³. Если первоисточник, откуда черпал свои сведения о походах Ираклия автор „Хроники“ царевич Сумбат, был на греческом языке, то вполне естественно допустить, что указанное здесь название не было понято Сумбатов. По созвучию с популярным именем „Софии“ он должен был принять его за известное женское имя и передать на грузинском в форме *წოპო*, откуда и произошло это загадочное название в тексте. Указанный грекоязычный первоисточник должен был быть халкедонитской версией истории о походах императора Ираклия I.

Итак, интересующее нас место в тексте „Хроники Сумбата“ дол-

¹ ვახუშტი—აღწერა სამეფოსა საქართველოსა (საქართველოს გეოგრაფია), თ. ლომოურის და ნ. ბერძენიშვილის რედაქციით. თბილისი. 1941, გვ. 36.

² *ibid*, перевод наш.

³ По этим же нормам греческой фонетики армяно-сирийский *Շոփ* транскрибировался в форме Σόφης.

жны читать: და წარვიდა ბერდუჯს და დადგა გულსა წოფისასა და აღმართა ჯვარი ქვისა, და დადგა საფუძველი წმიდის ღვთის მშობლის ეკლესიისა და აღასრულა გუმბათი მისი... В соответствии со сказанным, по-русски эту фразу должны передать: „отсюда он отправился в Бердуджи, остановился посреди (местности) Цопа, воздвиг каменный крест и положил основание церкви святой богородицы и закончил (постройку) ее купола“.

После сказанного, если обратимся к реалиям местности, то таковым памятником может быть только нын. халкедонитский монастырь Ахтала, Пхндзаханк (*Պհնձախանք*) армянских историков, вокруг которого действительно существует предание, что его основал император Ираклий I при своем походе в Персию.

Ն. Թումանյան

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Ողջուն, ողջուն ձեզ՝ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր —
Եղբայրական երգ ու սեր:
Հ. Թ.

Վրաստանի պոետներին նվիրված՝ Թումանյանի բանաստեղծության (1919 թ.) այս տողերը թարմ ու այժմեական են հնչում ե այսօր: Ուանդավառությամբ գրված այս տողերը ցույց են տալիս բանաստեղծի ջերմ ու մեծ սերը դեպի վրաց պոետիան, վրաց ժողովուրդը և դեպի Վրաստանն առհասարակ:

Թումանյանը սիրում էր Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին և տալիս էր շարունակ երազում նրանց երջանիկ ապագան՝ խաղաղ ու կուլտուրական մթնոլորտում: Այդ խաղաղ ու կուլտուրական մթնոլորտը նա դնում էր հնարավոր և իրականանալի՝ ռուս մեծ ժողովրդի բարեկամության պայմանով: Նա այդ էր համարում «պատմության ուղիղ ընթացքը», պատմության ճշմարիտ ճանապարհը:

Ինչպես իր ստեղծագործության մեջ Թումանյանը, որպես բանաստեղծ, ժողովրդից էր գալիս, ժողովրդի ստեղծագործությունից, և դեպի ժողովուրդը դնում, այնպես էլ քաղաքական-հասարակական կյանքում և խնդիրներում Թումանյանը ժողովրդի դարավոր փորձից էր ելնում և դեպի ժողովուրդները գնում: «Մի մեծ բան կա, որ չպետք է շփոթել — էդ ազգերի լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա» — այսպես է ասում Թումանյանն իր «Բողոքի դեմ» հոդվածում¹:

Թումանյանը հավասար աչքով էր նայում բոլոր ժողովուրդներին կյանքին ու բախտին, երբեք չառանձնացնելով հայ ժողովրդին իր մոտիկ հարևաններից: «Մեզանից ամեն մեկս, — ասում է նա, — պիտի սիրենք մեր հարևանի ազատությունն ու աշխատենք նրա համար, պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով»:

Թումանյանի սրտին մոտ ու հարազատ էին բոլոր հարևան ժողովուրդները, հատկապես վրաց ժողովրդի հետ նա կապված էր խորը և ամուր կապերով: «Վրացուն սիրելուց հեշտ բան չկա» — ասում էր նա: Թումանյանի գվարթ ու պայծառ բնավորությունը ներդաշնակում էր վրաց ժողովրդի բա-

¹ «Հորիզոն» № 75, 1910 թ.:

նաստեղծական հոգին, պարզ ու սրտաբաց բնավորությունը, վրացու զվարթ ու անկեղծ երգը, Վրաստանի մեղմ բնությունը: Թումանյանի բազմաթիվ հոգվածներում, նամակներում և ղրղոլոցներում հաճախ է երևան գալիս դանազան ձևերով արտահայտված նրա այդ ջերմ ու մեծ սերը: Վրաց գրողներին ուղղված նրա մի անտիպ նամակը (1921 թ.) սկսվում է հենց իր այդ սիրով. «Ես, իբրև մի բանաստեղծ մարդ, անհունորեն սեր սածելով դեպի ժողովուրդները, առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբայրակից վրացի ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ թանկագին կապերով»:

Վրաց պոետներից մեկին, իր մի այլ նամակում, 1919 թվին Թումանյանը գրում է.

«Դուք, իմ երիտասարդ բարեկամ, ղգացվում եք, որ ես Վրաստանի մասին թե առաջ, թե այժմ բարձր կարծիք եմ հայտնել ու լավ ցանկություններ:

Այո: Եվ ավելին կասեմ — էդ սերն ու բաղձանքը անասան էդպես էլ կմնան. առաջինը՝ որովհետեւ ես միայն սեր ու բարի ցանկություններ ունեմ ամենքի համար, երկրորդն էլ՝ էդ լավ ղգացմունքները հիմնված են մեր հին եղբայրակից ու բախտակից վրացի ժողովրդի բարի, պայծառ ու ազատասեր ոգու վրա: Զարտուղի դեպքերն ու անցողակի դժբախտ երևույթները և կամ էս ու էն պակասությունները անկարող են խախտել էդ խոր հավատն ու սերը»:

Թումանյանի այդ լավ ղգացմունքները, որ գալիս էին մեծ հումանիտաի սրտից, հիմնված էին դարերի կյանք ունեցող փաստերի ու դեպքերի վրա: Ամեն անգամ, երբ առիթ էր լինում, նա միշտ այդ փաստերով էր գալիս լուսավորելու վրաց և հայ ժողովուրդներին կյանքի մուտք միջադեպերը, ցույց տալու, որ հայն ու վրացին միշտ եղել են և պիտի մնան հաշտ ու համեմատելի լավ հարևաններ:

Նա մի անասան, կուռ հավատ ուներ դեպի ժողովուրդների խաղաղասիրական բնազդը. նրա խորը համոզմունքով՝ ժողովուրդներն առհասարակ անընդունակ են կռվի, արյունի, որ նրանք միայն մի հակում ունեն՝ ապրել խաղաղ ու հաշտ կյանքով: «Ժողովրդի հոգին միշտ բարձր է ու ազնիվ և խորթ է ու օտար ամեն բռնություն, անընդունակ է ամեն վատ պործի»:

Նշելի է հատկապես Թումանյանի «Պայծառ էջեր» հոդվածը, որտեղ նա ակնարկ է նետում երկու ժողովուրդների պատմական անցած էտապների վրա, շեշտելով այն հանգամանքը, որ երկու ժողովուրդներն էլ իրենց պատմությունն սկսում են նրանով, թե «Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը եղբայրներ են եղել, մնացել են ու մնում են անասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով», թե երկու ժողովուրդներն էլ բախտակից ժողովուրդներ են, միասին են զարգացել, պայքարել ու տառապել իրենց աղատություն, իրենց կուլտուրայի համար և միշտ փոխադարձաբար օգնել ու ապավինել են իրար:

«Աշխարհքում եթե ժողովուրդներ կան, որոնք իրենց դարավոր ազնիվ մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի են լավագույն օրերի՝ անկասկած դրանցից է վրացի ազգը: Ու ինչն է հայը նրա

երջանկության ցանկացողը Հպետք է լինի» — այսպես է գրում Թումանյանը 1915 թ. իր անտիպ հոդվածներէից մեկում:

*
*
*

Անդրկովկասյան ժողովուրդները միջև բարեկամական կապեր ստեղծելու լավագույն հաստատուն միջոցներից մեկը Թումանյանը համարում էր գրականութունը, ժողովուրդների գրականության փոխադարձ ճանաչողութունը: Սկզբերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արժարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, — ասում է նա, — քան գրականութունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին»¹:

Այս խորը համոզմունքին լինելով, Թումանյանը ոչ միայն ինքն անձամբ ուսումնասիրում էր վրաց, պարսիկ և այլ ժողովուրդների գրականութունն ու արվեստը, այլև ամեն կերպ աշխատում էր լայնացնել, ընդհանրացնել, մասսայականացնել այդ փոխադարձ ծանոթության և ճանաչողության գիտակցութունը: Այդ նպատակով Թումանյանը Գրողների Ընկերության միջոցով կազմակերպում է մի շարք երեկույթներ՝ նվիրված հարևան ժողովուրդների գրականությանը և, առաջին հերթին, վրաց գրականությանը, որպես ամենամոտ ու հարևան ժողովրդի:

Բացի գրական երեկոներից, անձնական կապերից ու ծանոթություններից, Թումանյանը մեծ կարևորութուն էր տալիս նաև թարգմանական գործին: Թարգմանական գրականության միջոցով է, որ ժողովուրդները կարող են ավելի մոտիկից իրար ճանաչել և խորացնել փոխադարձ բարեկամական հարաբերությունները:

Թե որքան մեծ տեղ և նշանակություն էր տալիս Թումանյանը թարգմանական գրականությանը, այդ երևում է վրաց բանաստեղծ Սիկո Փաշալաշվիլու հուշերից, ուր նա հիշատակում է Թումանյանի կատարած գործն այդ բնագավառում: Ահա մի հատված Ս. Փաշալաշվիլու հուշերից՝ գրված 1936 թ.

«Թարգմանությունը լավ ճյուղ է, — ասում էր Հովհաննեսը, — սակայն նա պատահական բնույթ Հպետք է կրի: Այս գործը մեղանում պետք է խորանա: Նրա միջոցով հարևան ազգերը պետք է ճանաչեն միմյանց կուլտուրական հարստությունը, գրականությունը, արվեստը, պետք է հասկանան միմյանց ցամաք ու ուրախությունը:

Հետագա տարիների ընթացքում Հովհաննեսն աշխատում էր նույն գաղափարը գործնականապես իրականացնելու համար: Նրա խորհրդով մի շարք հայ բանաստեղծներ ու արձակագիրներ սկսեցին թարգմանել վրաց գրականությունից նմուշներ: Որոշված էր նույն գրողների զլխավորությամբ կազմակերպել վրաց գրողների տուրնի Հայաստանում և հայ գրողներին՝ Վրաստանում, սակայն այս բանին խանգարեց փետրվարյան հեղափոխությունն ու հետագայում մենչևիկները և գաշակների մարդակեր շովինիզմը:

Հ. Թումանյանն սքանչելի նախաձեռնություն ցույց տվեց հայ և վրաց գրողների մերձեցման գործում: Նա այս գործը զլխավորում էր գրական

¹ Խոսք՝ ասված վրաց գրականությանը նվիրված երեկույթին. «Հորիզոն» № 52, 1914 թ. մարտի 9:

հանդիպումների միջոցով: Հովհաննեսի գլխավորութեամբ բազմաթիվ դիտարկումներ, թարգմանությունների ընթերցումներ և զբաղան-երաժշտական երեկոներ կազմակերպվեցին¹:

*
* *

Թումանյանի սերն ու համակրանքը դեպի վրաց ժողովուրդն արտահայտվել է նաև նրա պոեզիայում: Դեռևս 1892 թվին գրում է երկու հարե-վան ժողովուրդներին նվիրված «Հաշտություն» վերնագրով մի բանաստեղծություն, որտեղ սիմվոլիկ կերպով այդ երկու ժողովուրդները ներկայանում են լեռների պատկերներով, մեկը՝ Մասիսի, իսկ մյուսը՝ Կապուկի: Այդ երկու լեռները Կովկասյան լեռների շուրջպատում իրար հաշտության ձևով են մեկնում, իրար գգվում —

Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր ընկեր,
Մի նայիր հաե, ի՞նչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում²:

1893 թվին, վրաց նշանավոր բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու աճյունը Գանձակից Թիֆլիս փոխադրելու առթիվ, Թումանյանը գրում է «Ն. Բարաթաշվիլու գամբանի վրա» բանաստեղծությունը, ուր երևում է Թումանյանի սերը, հոգեկցական ներքին կապն ու հարադատությունը դեպի այդ մեծ բանաստեղծը:

Մխիթարելով սգավոր Վրաստանին իր վերաշարժված ցավ ու կսկիծի համար, մխիթարում է վրաց ժողովրդին, որ բանաստեղծն իր երգերով ու գործերով միշտ էլ մնում է կենդանի ու անմահ.

Կը թաղես, այն, դարձյալ քո երգչին,
Բայց նըրա վառած զգացմունքներին
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կը մնան հավիտյան,
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր:

Եվ քեզ, անցավոր շիրիմից շիրիմ,
Հեզ ժողովրդի երգիչ մտերիմ,
Ի՛նչ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանդիստ անվրդով³:

Այս բանաստեղծությունը, որ Թումանյանը կարդացել է 1893 թ. ապրիլի 25-ին, որպես «Մուրճ» ամսագրի ներկայացուցիչ, վրացերեն թարգմանել է կարգադրիչ հանձնաժողովի անդամ Աննադարովը: Բանաստեղծության բովանդակությունը վրացերեն լիզվով տպագրվել է վրացական «Կվա-լի» թերթում (1893 թ. № 18):

¹ Մի կ ո Փ ա շ ա լ ա շ վ ի լ ի — «Ազգերի եղբայրության դրոշակակիրը». տես «Արշավ» երկամսյան ժուռնալ, № 2, էջ 19—20, Թբիլիսի, 1938 թ.:

² Հ ո վ Ն. Թ ու մ ա ն յ ա ն — «Գեղարվեստական երկեր», էջ 114, Երևան, 1934 թ.:

³ «Մուրճ», 1893 թ., № 4, էջ 520:

1918 թվին Թումանյանը գրում է «Վրաստանի ոգին» բանաստեղծութունը և նվիրում վրաց պոեզիայի օրվան՝ մայիսի 7-ին: Այս բանաստեղծութունն սկսվում է հետևյալ տողերով.

Գալիս եմ ես Վրաստանի
Զրքնաղ ողուն երկրպագու,
Քրքոջը վեհ ու գեղանի,
Քրքոջն արի հայի հողու¹:

1916 թվին, հայ-վրացական հարաբերությունների առիթով գրում է «Վրաստանի համար» բանաստեղծութունը՝ «Հողվածի փոխարեն» ենթավերնագրով, որտեղ առանձին սիրով ու ողևորությամբ հանդես է գալիս ի պաշտպանություն վրաց ժողովրդի խաղաղասիրական բնավորության: Այդ բանաստեղծութունն սկսվում է այսպես.

Երբ խոսում են Վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում հայտնի,
Նվ խորին ցավ, և ամոթ:

Ո՛չ ապաքեն գիտեն նրա
Ոստիները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ²:

Որպես ժողովուրդների համերաշխ կյանքի ջատագույններից մեկը Թումանյանն առանձին սեր ու ակնածություն ունեւր գեպի վրաց պոեզիայի մեծ ներկայացուցիչը՝ Շոթա Ռուսթավելին, որն ինքն արդեն ժողովուրդների եղբայրության սիմվոլն է: Ամեն անգամ, երբ խոսք էր լինում Ռուսթավելու մասին, Թումանյանը որակում էր նրան որպես Վրաստանի անմահ Շոթայի, ոսկեյար քնարով ու կաթոգին ձայնով մեծ Շոթայի: Իր գրադարանում Թումանյանը մի բարձր պատվանդանի վրա էր պահում ժողովրդական քանդակագործ Յա. Նիկոլաձեի կերտած Ռուսթավելու կիսանդրին:

Մոտ քառասուն տարի ապրելով Թբիլիսիում, նա լայն ծանոթություն ունեւր վրաց գրողների, գործիչների և արվեստագետների հետ: Անձամբ ծանոթ էր Իլիա Ճավաճավաձեին, Ակ. Ծերեթելուն, Վաթա Փշավելուն և ուրիշներին:

1907 թվին, Իլիա Ճավաճավաձեի մահվան առիթով, Թարգմանում է նրա երկու բանաստեղծությունը՝ «Գարուն» և «Էլեգիա»: Առանձին մտերմություն և հարազատություն էր զգում գեպի Վաթա Փշավելին. սիրում էր նրա առողջ, լեռնային պարզ հոգին և ժողովրդական շնչով տոգորված պոեզիան: 1915 թվի ամառը, երբ Վ. Փշավելին հիվանդ էր, Թումանյանն այցելություն էր գնում նրան և առանձին համակրանքով խոսում նրա մասին:

1914—15 թ.թ. նա մոտ էր վրաց Գրողների Միության նախագահ Կոտե Մաղաշվիլուն, Դավիթ Կրիաշվիլուն, Իլիա Նակաշիձեին, Զ. Պալիաշվիլուն,

¹ «Նոր աշխատավոր» № 27, 1920 թ.

² «Հորիզոն» № 208, 1916 թ. սեպտ. 18:

Շալվա Դադիանուն, Դ. Տարիձեին, Ի. Դրիշաշվիլուն, որոնց հետ կապված էր փոխադարձ բարեկամությունը:

Թումանյանը բանաստեղծներին համարում էր ժողովրդի իսկական ներկայացուցիչներ ու հարադատ դավաններ և միշտ նրանց էլ ուղղում իր խոսքը: Վրաց գրողներին և զրականագետներին ուղղված իր բոլոր նամակներն ու ողջույնները նա միշտ վերջացնում է երկու հարևան ժողովուրդների պայծառ ու երջանիկ ապագայի հույսերով ու բարեկամական կապերի հեռանկարներով:

1918 թ. Դավիթ Կլեիշվիլուն ուղղված նամակը Թումանյանը եղբայրական է հետևյալ խոսքերով.

«Վաղը պիտի ստեղծենք մեր երազած մթնոլորտը:

Հոգով նվիրված քեզ և ամբողջ վրացի ժողովրդին՝

Հովհ. Թումանյան»,

իսկ Ս. Փաշալաշվիլուն ուղղված նամակը վերջացնում է այսպես.

«Հավաստիացնում եմ Ձեզ, որ ինչքան թանգ են ինձ Վրաստանը և սքանչելի վրացական հոգին, նույնքան թանգ են և այն մարդիկ, որոնք հանդիսանում են այդ հոգու կրողներն ու մեկնաբանողները:

Վրացին — դա արդեն բանաստեղծ է, իսկ վրացական բանաստեղծը — դա կրկնակի բանաստեղծ է:

Ամբողջ հոգով ցանկանում եմ, որ ողջ լինեք միշտ երգելու Վրաստանի երջանկությունն ու նրա լուսապայծառ օրերը»¹:

Նույն փոխադարձ ջերմ սիրով էին համակված վրաց գրողները, արվեստագետներն ու գործիչները դեպի Թումանյանը: Վրաց հայտնի դրամատուրգ Շալվա Դադիանին իր հուշերում գրում է հետևյալը.

«Նա մեծ հավատ ու հոգու անսասանություն էր հանդես բերում, երբ խոսքը վերաբերում էր իրեն հետաքրքրող ու այրող հարցերին:

Որոնք էին այդ հարցերը: Պոեզիան և ժողովուրդների բարեկամությունը, մասնավորապես հայ-վրացական փոխհարաբերությունները:

Որքան քնքշանք, որքան գորովալից սրտի կսկիծ կար նրա խոսքերի մեջ:

Արաքս և Կուր գետերի մի հարթավայրից սկիզբ առնելը, հետագայում կողք-կողքի եղբայրաբար հոսելը և վերջում միանալը՝ ծովի մեջ թափվելու համար — նրա աչքում մի կենդանի սիմվոլ էր երկու ժողովուրդների պատմական ճակատագրի: Նրա պատկերացումով՝ ծովն այստեղ ներկայանում էր որպես մարդկություն: Նա հավատում էր, որ Հայաստանն ու Վրաստանը ինքնուրույն կերպով դարձանալով և հասունանալով, հարադատ ու բարձր կուլտուրայով զինված, վերջում իրենց լուսման պիտի զցեն ողջ մարդկության գանձարանը:

Մենակ էր նա, որը էր մնացել այս անվհեր մարզն այն տխուր ու մռայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրության իր քարոզով:

Պատմությունը, սակայն, ապացույցեց, թե որքան ճիշտ էր մտածուկ ու զգույն Թումանյանը՝ այդ մեծ մարզը»²:

¹ «Թումանյանը քննադատ», էջ 450, Երևան, 1939 թ.:

² Շալվա Դադիանին — «Անվհեր հոգու տեր պոետը» («Պոռտրտ. Հայաստան», 1938 թ., № 67):

* *

1918 թվի նոյեմբերին մենշևիկյան և դաշնակցական բուրժուական կառավարութիւնների միջև բռնկում է հայ-վրացական պատերազմը: Թումանյանը լուռ հանդիսատեսի դերում չի մնում, այլ վրդովված ու վշտացած այդ տխուր միջադեպից, հենց առաջին օրերին միջամտում է, միջոցներ ձեռք առնում դադարեցնելու այդ չարաքաստիկ պատերազմը:

Այդ օրերին նա կորցրել էր իր հոգեկան հանդիստն ու հավասարակշռութիւնը. մի խորը վիշտ էր պատել նրան և ներքին վրդովմունք: Բացի վրացի և հայ մտավորականներին ու թերթերի խմբագիրներին կատարած անձնական այցելութիւններից՝ նա, իր կենդանի գրույցի ու խոսքի հետ միաժամանակ, մի շարք հոդվածներ է գրում այդ տխուր պատերազմի առիթով՝ իր դարմանքն ու գայրույթը հայտնում՝ խոր ցավի հետ միասին: Իր հոգվածներում էքսկուրսներ է կատարում դեպի անցած դարերը, պատմութիւնից օրինակներ է բերում հիշեցնելու անցյալում հայ և վրաց ժողովուրդների սերտ բարեկամական կապերը, Աշոտ և Դավիթ թագավորների պայծառ շրջանը, համոզելու, որ հայն ու վրացին եղբայրական ժողովուրդներ են եղել և նրանք երբեք եղբայրասպան պատերազմներ չեն ունեցել ու չեն կարող ունենալ:

«Ազգերի հարեանութիւնների մեջ դժար կարելի է գտնել ավելի լավ հարեաններ, քան հղել են հայն ու վրացին» — այսպես է սկսում Թումանյանն այդ պատերազմի առիթով գրած «Վերջին տեղատվութիւնը» իր հոդվածը և ապա թվելով հարեան թշնամի ազգերին, շարունակում է.

«Պատմութեան մեջ հայտնի չի հայ-վրացական պատերազմ: Երկու ժողովուրդներն էլ եղբայրորեն կարեկցել են իրար, իրար օգնել ու միասին կանգնել դիմագրավել են ընդհանուր թշնամուն, լավ հասկանալով, թե իրենց ճակատագրին ինչպես սերտ կապված են իրար հետ»¹:

Եվ հանկարծ՝ սահմանային շրջանների համար 1918 թ. նոյեմբերին երկու ժողովուրդների «դիմոկրատիկ սոցիալիստական» կառավարութիւնները պատերազմ են հայտարարում իրար... ահա ինչն էր դարձացնում և վշտացնում Թումանյանին:

Թումանյանը շատ բարձր էր դնում Վրաստանի պատմական դերը և մեծ կարևորութիւն ու նշանակութիւն տալիս Վրաստանի հարեանութեանը Հայաստանի համար. «Դժվար է մի կարճ ակնարկի մեջ պատմել, թե ինչ է եղած Վրաստանը Հայաստանի համար երկար դարերի ընթացքում: Ես էդ մասին կցկտուր խոսք եմ արել տարիների ընթացքում մի շարք հոդվածների մեջ» — այսպես է գրում Թումանյանն իր մի սևագիր, անվերնագիր հոդվածում, որն սկսվում է «Էս պայծառ դեպքերը...» բառերով: Ինչպես այս, այնպես էլ 1918 թ. անտիպ հոդվածներից մեկում, վերնագրված՝ «Մոտիկ հարեաններն ու հեռու բարեկամները», Թումանյանը խիստ կերպով դատապարտում է այն ղեկավարներին, որոնք իրենց սխալ քաղաքականութեան հետևանքով հայ ժողովրդին տարել են դեպի կործանում, դեպի անդունդ և երկիրը դարձրել ավերակ:

Նա դատապարտում է նրանց հատկապես այն բանի համար, որ տարի-

¹ «Ժողովրդի ձայն» № 60, 1918 թ. նոյեմբերի 16:

ների ընթացքում չեն կարողացել բարեկամական հարաբերություններ ստեղծել իրենց հարևան ժողովուրդների հետ, ճանապարհ ու լեզու գտնել հաշտ ու խաղաղ ապրելու, առաջին հերթին՝ մոտիկ հարևանի—վրացիների հետ և հույսները դրած հեռու բարեկամների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի և մյուսների վրա, հավատում են նրանց օգնությանը և գոտովում վրաց և ադրբեջանական ժողովուրդների հետ:

«Հայ ժողովրդի ղեկավար շրջանները հույսները դրած հեռու բարեկամների վրա, չաշխատեցին կապվել իրենց մոտիկ հարևանների հետ, ոչ նույնիսկ Վրաստանի հետ, և քննադատված թշնամիներով:

Ասում եմ նույնիսկ Վրաստանի հետ, որի հետ ոչ միայն հին հաշիվ ու թշնամություն չունեն, այլ բարեկամական հին ու մեծ կապեր ունեն և կարող էր նոր սրտալի կապ հաստատել»¹:

Հայտնի է Թումանյանի՝ այդ օրերին գրած և Հևան Կիպիանուն ուղղած մարգարեական ու խաղաղասիրական նամակը, որտեղ կրկին անգամ շեշտում է ժողովուրդների ատելությունը դեպի սուրն ու թշնամությունը և բռնուն ցանկությունը կապվելու եղբայրական համերաշխության կապերով:

«Ժամանակն է, որ մեր կառավարող շրջաններն էլ հասկանան ժամանակի ու ժողովուրդների պահանջները, նրանք էլ մի քիչ բանաստեղծ դառնան, նրանք էլ մեզ հետ ու մեր ժողովուրդների հետ միասին գան մեր եղբայրության կամուրջի մեջտեղը եղբայրորեն համբուրվելու, այլապես նրանց էլ կհասնի էն կառավարիչների ճակատագիրը, որոնք խորտակվում են իրենց վատ ճանապարհին և անեծքով կորչում են եղբայրության, խաղաղության ու արդար աշխատանքի դրոշմ տանող ժողովուրդների ոտների տակ»²:

Թումանյանն իր ակտիվ մասնակցությունը ու միջամտությունը աջակցում է վերջ դնելու հայ-վրացական խայտառակ պատերազմին: Նրա նախաձեռնությամբ Թբիլիսիում երկու ժողովուրդների ներկայացուցիչներից գումարվում է մի խորհրդակցություն, որտեղ ձևակերպվում են հաշտության պայմանները:

Թումանյանը, որպես Հայրենակցական Միությունների Միության նախագահ, 1919 թ. դեկտ. 18-ին, Միությունների բոլոր ներկայացուցիչների մասնակցությամբ արտակարգ նիստ է հրավիրում քննելու հայ-վրացական ընդհարման խնդիրը և կասեցնելու այն: Ահա այդ նիստի որոշումները, որ հանված են Հայկական ՍՍՌ Պետ. Կենտրոնական Արխիվից:

«Հայոց Հայրենակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդը իր դեկտեմբերի 18-ի արտակարգ նիստում քննելով հայ-վրացական ընդհարման խնդիրը և ի նկատի ունենալով—

1. որ հարևան և ազգակից ժողովուրդների միջև առաջ եկած եղբայրասպան պատերազմը հղի է սարսափելի ծանր ու կործանարար հետևանքներով,

2. որ այդ ժողովուրդների բարյացակամ ու խաղաղ համակեցությունն է միակ գրավականը նրանց քաղաքակրթական հառաջադիմության և քաղաքական ու տնտեսական բարգավաճման,

3. որ այդ երկու եղբայր ժողովուրդների պատմության մեջ չեղած՝

¹ «Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը» անտիպ հոդվածից:

² Հևան Կիպիանուն ուղղված նամակից. «Кавказск. слово» № 66, 1919 թ. ապրիլի 10:

համակեցության խախտումը կնշանակի ոճիր դործել այդ ժողովուրդներին խղճմտանքի դեմ,

4. որ չկա և չի կարող լինել այդ երկու ազգակից ժողովուրդներին միջև և ոչ մի դեպք ու ոչ մի խնդիր, որ անկարելի լիներ լուծել հաշտ ու խաղաղ ճանապարհով,

5. որ այդ համակեցության խախտումը կատարվում է այն ժամանակ, երբ այդ ժողովուրդները մտնում են նոր ու լուսավոր կյանքի շրջանը—

Որոշեց—ա) բոլոր կերպով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, բ) պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական դործողությունները, գ) ընդհարման պատճառները վերացնելու համար անմիջապես դուրս ելն հայ-վրացական կոնֆերանս, որի իրավասությանը հանձնել նաև մյուս բոլոր վիճելի խնդիրները, դ) տրամադրել երկու կառավարություններին խորհրդիս լայն աջակցությունը վերահիշյալ նպատակներին հասնելու համար և այս որոշումը հայտնել երկու կառավարություններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկություններին և ամեն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խավերի մեջ:

Հայրենակցական Միություններ՝ Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի, Ախալքալախի, Գանձակի, Ղազախ-Շամշադնի, Ղարսի, Ղարաբաղի, Լոռու, Հին-Նախիջևանի, Նոր-Ֆայազետի, Պարսկաստանի, Փամբակի, Շամախու և Շուլավերի» (նիստի որոշումներն ստորագրել է Հ. Թումանյանը):

* * *

Թումանյանի խաղաղասիրական գործունեության արձագանքներն ափելի ցայտուն տեսնում ենք 1919 թվին, երբ Թբիլիսիում տոնվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Այդ հոբելյանին մասնակցում են Անդրկովկասի ժողովուրդներից՝ վրացիները, ադրբեջանցիները, ինչպես և ռուսները, որոնք ողջունելով Թումանյանին, որպես վաստակավոր գրական գործչի, ընդգծում են հատկապես նրա խոշոր դերը ժողովուրդների համերաշխությունում ու եղբայրության գործում:

«Վերջերս իմ հիսնամյակի առիթով ես համոզվեցի, որ դործն արդեն չափազանց շատ է հասունացած: Տեսա, որ մեր հարևան ժողովուրդների ներկայացուցիչները ինչքան իրենց հարևան ժողովրդի գրականությունը հարգելու համար են գալիս, հազար էնքան թանգ է նրանց համար էն լուրը, որ ես կողմնակից եմ եղած ժողովուրդների համերաշխությանն ու եղբայրությանը:

Մեր հայ հասարակությունը երբեք էնքան բուռն չծափահարեց իմ բանաստեղծություններին, ինչքան ազգերի հետ եղբայրության խոսքը: Ես շատ բաների մասին խոսեցի, բայց ամենից ավելի մեր նոր երիտասարդությունը ոգևորված ծափերով ընդունեց, երբ ես՝ փորձված անցած սերնդի փորձերից, նոր սերնդին կտակում էի չդնալ հսկերի հետքով, թողնել սահմանափակ ազգայնականությունը ու թշնամանքը ու փորձված երջանկություն համար եղբայրանալ հարևան ժողովուրդների հետ: Եվ պետք է տեսնել, թե ամեն անգամ ինչ ոգևորություն է տիրում մեր հասարակությանը, երբ ինձ հետ միասին նրա մեջ հայտնվում են մեր հարևան ժողովուրդների բանաստեղծները:

Սրանով մեր ժողովուրդներն իրենք արդեն ցույց են տալիս ճանապարհը և հրամայում են զնալ էդ ճանապարհով»¹։

Պայծառ ապագա ստեղծելու գործը նա համարում է նոր սերնդի անելիքներից մեկը, որ նրանք պետք է հների ճանապարհով չզնան, այլ նոր կյանք ստեղծեն։

Իր հիսնամյակի առթիվ ուսանողությանն ու աշակերտությանն ուղղված պատասխան խոսքում Թումանյանն ասում է. «Շատ ճակատներ կան պատերազմում, սակայն ամենավսեմը ձերն է, որովհետև դուք եք կոլում այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն ու ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս և արդարություն։ Դուք պիտի պայքարեք՝ վերացնելու ժողովուրդների վրայից տանջանքներն ու թշվառությունները»²։

Իսկ ուսանողությանն ուղղված իր խոսքը եզրափակում է այսպես. «Թող մեր համբույրները անցնեն ժողովուրդներին, թող սերը թագավորի նրանց սրտերում»։

1920 թվի մայիսի 7-ին վրաց գրողները տոնում են իրենց պոեզիայի և զրականության օրը. Թումանյանն այդ առթիվ գրում է «Գնանք» վերնագրով հոդվածը և անձամբ ողջունելով վրաց գրողների տոնը, անդրադառնում է մոտ անցյալում տեղի ունեցած հայ-վրացական պատերազմին.

«Ես ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարավոր անօրինակ լավ հարաբերությունը և խորին վիշտ է պատճառում ինձ մեջտեղի եղած թյուրիմացությունը։

Ժողովուրդներն որոշումներն ու քայլերն ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարությունները։

Կառավարությունները ժամանակավոր են ու փոփոխելի, ժողովուրդները՝ մշտական ու անփոփոխ»³։

1921 թվին, վրաց գրողները Թումանյանին համարելով երկու հարևան ժողովուրդներին միացնող դեմքերից մեկը և միևնույն ժամանակ իրենց բանաստեղծը, որպես երկու ժողովուրդների «ընդհանուր» բանաստեղծի, իրենց կողմից ևս կենսաթոշակ են նշանակում նրան. Թումանյանը, վրաց գրողների այդ վերաբերմունքից զգացված, մի նամակ է ուղղում «Իմ եղբայր վրացի գրողները» վերնագրով։

Թումանյանը չի բավականանում հոգևածներով, նամակներով, ելույթներով և ամենօրյա կենդանի կապի պահպանումով այդ ժողովուրդների հետ, ոչ էլ նույնիսկ իր ակտիվ մասնակցությամբ 1905—1906 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների և կամ 1918—1921 թ.թ. դեպքերի կասեցմանը։ Այդ տարիներին նա մտածում էր անդրկովկասյան ժողովուրդների փոխադարձ եղբայրությանը մի ժողովածու նվիրել, դրա համար 1919 թվին սկսում է հայ, վրաց, ադրբեջանական աշխատավոր ժողովուրդների բարեկամությունը վերաբերող, նրանց պայծառ հարաբերությունը լուսաբանող զանազան նյութեր, դոկումենտներ հավաքել։ Այդ ժողովածուի միջոցով նա ուզում էր ցույց տալ, որ աշխատավոր ժողովուրդները կապված են իրար հետ սիրով,

¹ «Իմ պատասխանները Լևոն Կիպիանյանին». «Кавказское слово» № 66, 1919 թ.։

² «Մշակ» № 41, 1919 թ. փետրվարի 21։

³ «Նոր աշխատավոր» № 98, 1920 թ. մայիսի 6։

և միայն բուրժուական կառավարությունների իշխանավորներն են, որ սը-
րով կտրում են այդ կապը:

1919 թվին թերթերում նա հետևյալ հայտարարությունն է տալիս.
«Թե 1905—06 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, թե վեր-
ջին մեծ պատերազմի ժամանակ շատ դեպքեր են պատահել, երբ հայը
պաշտպանել է թուրքին, թուրքը՝ հային, ցույց տալով մարդասիրության
կամ անոխակալության բարձր օրինակ, նույնիսկ հաճախ իր անձը վտանգի
ենթարկելով»:

Ես հավաքում եմ էդ դեպքերի պատմությունները, և սրանով խնդրում
եմ էն բոլոր մարդկանց՝ հայ, թուրք, թե ուրիշ ազգի՝ ով գիտե էդ տե-
սակ որևէ դեպք, նեղություն քաշի իր գիտցածը տեղով ու անունով գրի
և իր ստորագրությունով ինձ ուղարկի էս հասցեով...»¹:

Այդ ժողովածուի վերնագիրը Թումանյանը դնում է «Պայծառ էջեր»,
որովհետև, ինչպես ինքն էր ասում, պայծառ էր նայում ժողովուրդներին
սպառնալիս: Դժբախտաբար այդ դործը մնում է անավարտ:

* * *

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման պայքարը Թումանյանը
կապում է ուստի մեծ ժողովրդի ուղուցիտն պայքարի հետ:

1905 թվի հայ-թուրքական կոտորածը նա համարում է ցարիզմի վա-
րած ընդհանուր ազգային քաղաքականության հետևանք, ուստական բյու-
րոկրատիայի սև գործը, որ դրանով ցարիզմը ձգտել է «սլաղեցնել, պղտո-
քել, թունավորել ժողովուրդների հարաբերությունները»:

«Հեղափոխության ուրվականից վախեցած ուսական բյուրոկրատիան
ժողովուրդների համար մի չար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել դրանց
և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը»²—այսպես է սկսում իր
«Պայծառ էջեր» հոդվածը:

«Էդ ուղղությամբ նա դործի ձեռնարկեց Անդրկովկասում—պետք էր
իրար դեմ հանել երեք ժողովուրդներին՝ հայերին, վրացիներին և թուրքե-
րին»—այսպես է բացատրում և որակում Թումանյանն Անդրկովկասի ազգային
կոտորածները, իսկ ավելի վաղ, 1906 թվին, Փ. Վարդազարյանին գրած նա-
մակում ցավով ու դայրոյթով խոսելով այդ կոտորածների մասին, գրում է.
«Այսքան տգեղ, այսքան լիբր, այսքան անիրավ, հրեշական կռիվ, ինչ որ
թուրք-հայկական կոտորածներն են, դժվար թե եղած լինի»: Եվ ավելաց-
նում է. «մենք այս ցած ու տմարդի կռվով միանգամայն դուրս մնացինք
Ռուսաստանի ազատագրական մեծ կռիվից»: Իսկ ինքն այդ ժամանակ Լոռու-
Ղաղախի շրջաններում իր սպիտակ գրողակով համերաշխության և խաղա-
ղության գործն էր տանում հայ և թուրք բնակչության միջև:

Այս բոլորից հետո պարզ ու բնական է Թումանյանի ջերմ և սրտա-
քուխ ողջունն Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման
առթիվ, մի իշխանություն, որ բերում էր իր հետ հասարակ ժողովրդի

¹ „Борьба“ № 240, 16 октября 1919 г.

² Журнал „Братство“, Тифлис, 1920 г., էջ 12—13.

համար Թումանյանի տարիներով երազած խաղաղ կյանք, արդար աշխատանք, ազատ օր և երջանկություն:

1921 թ. փետրվարի 25-ին Թումանյանը Թբիլիսիում մեծ ցնծությամբ ողջունում է Կարմիր Բանակի մուտքը Թբիլիսի, կարմիրբանակայիներին իրենց ձիերի վրա համեմատելով Մուրոմցի Իլիայի վիտյազների հետ.

— Ահա մի իշխանություն, որի գերբի վրա տեսնում ենք ոչ թե զազաններ ու գիշատիչ թռչուններ, այլ մուրճ և մանգաղ, արդար աշխատանքի սիմվոլը: Մի իշխանություն, որ դալիս է ոչ թե կովեղու, կոտորելու ժողովուրդներին, այլ հաշտ ու խաղաղ կյանք բերելու ազնիվ աշխատանքով:

1941 թ. փետրվար.

Էզ. Թովչյան

ՖՈՅԻՏՎԱՆԳԵՐԻ ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՎԵՊԵՐԸ

Ստրկության և մարդակերության վերածննդի նողկալի պրոցեսը Գերմանիայում, հիտլերյան ավազակային բանդայի ահավոր ոճրագործությունները գեղարվեստական հզոր ուժով վերարտադրվել են Լիոն Ֆոյխտվանգերի «Հաջողություն», «Օպենհայմների ընտանիքը» և «Արտաքսում» վեպերում: Ինքնուրույն սյուժեներով, սակայն, իդեալական օրգանական միասնությամբ՝ այդ երեք վեպերն արտահայտում են ֆաշիզմի ծագման և պատմական զարգացման տարրեր շրջանները:

«Հաջողություն» վեպը գրված է 1928—30 թվականներին, երբ ֆաշիզմը ոճրագործությունների պատկառելի ծանրությամբ դեռևս իր խանձարուրի մեջ էր: «Հաջողություն» վեպում Ֆոյխտվանգերը նկարագրում է Բավարիայի մռայլ իրականությունը 1921—1924 թվականներին: Վեպի հիմքում ընկած է Մարտին Կրյուգերի դատական պրոցեսը: Կրյուգերն արվեստագետ է, թանգարանի ղեկավար: Բավարիայի ռեակցիոն իշխանությունը Կրյուգերին ցանկանում է հեռացնել նրա վարած գեղարվեստական քաղաքականության համար: Անհիմն մեղադրանքներով և կեղծ վկայությամբ Կրյուգերին դատում և բանտարկում են: Վեպի հիմնական ֆարսուլան է՝ պայքար Կրյուգերին ազատելու համար: Սակայն, «Հաջողություն»-ը Մարտին Կրյուգերի անհատական ողբերգության պատմությունը չէ, այլ պատմության ամենահարուստ դարաշրջաններից մեկի գեղարվեստական վերարտադրությունը: «Հաջողություն»-ը պատմության փիլիսոփայության յուրատեսակ ներածություն է—ստեղծագործություն ոչ միայն հիտլերյան Գերմանիայի նախապատմության և ֆաշիզմի էության մասին, այլև Նվրոպայի պատմական բախտի դեմոկրատական և հումանիստական պայքարների անկման մասին:

Վարպետորեն ընտրած սյուժեն հեղինակին հնարավորություն է տալիս նկարագրելու հետպատերազմյան Բավարիայի հասարակական տարրերը խավերը, դասակարգերի և պարտիաների պայքարը: Ֆոյխտվանգերը նկարագրում է հետպատերազմյան տարիները՝ Գերմանիայում, ինֆլացիայի հետեանքների ամենաբարձր արտահայտությունը, հիտլերյան տխրահռչակ խռովությունը 1923 թվին: Բավարական կառավարությունը լուեյայն հովանավորում էր Հիտլերին և Լյուդենդորֆին, որոնք նախապատրաստում էին համապետական ֆաշիստական հեղաշրջում: Ռուրի օկուպացիան ֆրանսիացիների կողմից՝ անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում ֆաշիստական դեմագոգիայի համար, սակայն բավարական ֆաշիստները գործում են ոչ բավարար վճռականությամբ: Գերմանական և ֆրանսիական արդյունաբե-

բուժյան մագնատներն ընդհանուր լեզու են գտնում, Ռուբի ինցիդենտը լուծվում է: Ֆաշիստական վարձկան մարդասպանների շարժման հետագա ակտիվությունը դառնում է ավելորդ, կապիտալիստական մագնատները չեն օժանդակում, և «խակական գերմանացիների» խռովությունն ավարտվում է խայտառակ պարտությունով: Ֆոյխտվանգերը ցույց է տալիս ոչ միայն «խակական գերմանացիների» կախումը խոշոր արդյունաբերողներից, այլև սոցիալական այն խավը, որից ֆաշիզմը հավաքագրում է իր կողմնակիցներին: Ինֆլացիան արժեքադրկելով աշխատանքը, վերացնում է երկրի երեսից մանր բուրժուազիային: Տնտեսական խեղդող կարիքից հուսահատված այդ մարդիկ և քրեական հանցագործները հեշտությամբ ենթարկվում են Ռուպերտ Կուցների (իմա՝ Հիտլերի) դեմագոգիային: Հոգեկան հիվանդությունից ավերված ուղեղով «խակական գերմանացիների» առաջնորդ Ռուպերտ Կուցները, գարեջրատների այդ մշտական հաճախորդը և քրեական հանցագործների ոգեշնչողը, իր հիստերիկ ճառերի մեջ խոստանում է կախել «խակական Գերմանիայի» բոլոր թշնամիներին, հաց և աշխատանք տալ բոլոր հարիքավորներին: Ֆոյխտվանգերը ցույց է տալիս, որ ֆաշիստական պարտիան ձևավորվում էր գողերից, մարդասպաններից և փորձված դահիճներից, ինչպես՝ գեներալ Վեգեմանը (Լյուդենդորֆ), Ֆլաուխերը (Ֆոն Կարը), մինիստր Օտտո Կլենկը կամ ֆոն Դելմայերը և երիտասարդ էրիկ Բորենհակը (որի նախատիպն է ֆաշիստների կողմից փառաբանված գող և սուտենյոր Հորսա Վեսսելը)։ Վերջիններս իրենց գործունեությունն սկսելով ապահովագրված շների թունավորումով, անցնում են քաղաքական սպանությունների, դառնում Կուցների հավատարիմ զինակիցները:

«Հաջողություն» վեպում ընթերցողը խորապես պատկերացնում է ֆաշիստական պարտիայի ծագման պատճառները և նրա անդամների հակամարդկային, ոճրագործ դեմքը: «Հաջողություն» վեպի մեծագույն արժանիքն այն է, որ Ֆոյխտվանգերը ֆաշիստական պարտիայի ծագման առաջին շրջանում ըմբռնեց և գեղարվեստական մեծ վարպետությամբ մեկնաբանեց, որ ֆաշիզմը և մարդկային նորմալ դրությունն անհամատեղելի են, որ ֆաշիզմը մարդկության թշնամին է: Ֆաշիզմի հաղթանակը Գերմանիայում հումանիստ Ֆոյխտվանգերն ընկալեց որպես մարդկային պատմության և կուլտուրայի կողմից գարեբ առաջ թաղված ամենավայրի ընդհանրությանի հորդում, որպես մեծագույն անարգանք մարդու նկատմամբ:

Մարդու պայքարն իր արժանապատվության հաստատման համար «Հաջողություն» վեպի մեջ մեկնաբանվեց նոր իմաստով: Ֆոյխտվանգերը հանդես եկավ ոչ միայն նոր թեմատիկայով, այլև նոր վերաբերմունքով դեպի կյանքը, նա փորձել է բացահայտել նկարագրվող երևույթների պատմական իմաստը և բախտը: Ֆոյխտվանգերն ըմբռնում է, որ բուրժուական քաղաքակրթությունն իր ծագման շրջանում ուներ դրական առաջադիմական իմաստ, սակայն հետագայում ֆաշիստների ձեռքին քաղաքակրթությունը կորցրեց իր իսկական իմաստը, վերածվեց մարդատյացության քաղցի, հետևաբար, այն պետք է կործանվի, որովհետև ռացիոնալիստ Ֆոյխտվանգերի համար կենսական է միայն բանականը, ոչ բանականը դատապարտված է մահվան: Ֆոյխտվանգերը խորապես ըմբռնում է նաև այն, որ բուրժուական քաղաքակրթության անկումը չի նշանակում քաղաքակրթության անկում ընդհանրապես, այլ նշանակում է միայն փո-

խարինում այդ քաղաքակրթութիւնը մեկ ուրիշով, թեև ֆոյխտվանգերի համար դեռևս ամբողջապես պարզ չէ, թե ինչ է փոխարինելու կործանվող քաղաքակրթութիւնը, որը և կազմում է վեպի հիմնական պրոբլեմը:

Սովետական քննադատութիւնը ճշտորեն նկատել է, որ «Հաջողութիւն» վեպում ֆոյխտվանգերը խոսում է քաղաքակրթութեան երեք ուղիների մասին. առաջին կոնցեպցիան ներկայացնում է «Կալիֆոռնիայի մամոնտը»՝ ֆինանսիստ, պետութիւնների բախտը տնօրինողներից մեկը՝ Դանիել Վ. Պոտտերը: Այդ՝ «կազմակերպված կապիտալիզմի» ռեակցիոն ուտոպիական ուղին է: Երկրորդ կոնցեպցիան ներկայացնում է գրող Ժակ Տյուվերենը՝ հումանիստ, բանականութեան երկրպագու, որը, հակառակ Մարքսի, գտնում է՝ բացատրել աշխարհը, այդ նշանակում է փոխել այն: Երրորդ կոնցեպցիան արտահայտում է «կոմունիստ» Կասպար Պրեկլը, դեռևս խիստ անորոշ և հակասական: Տյուվերենն արտահայտում է ֆոյխտվանգերի հայացքները, սակայն Տյուվերենը ֆոյխտվանգերի վերջնական իգեպլը չէ, Տյուվերենի հայացքները ֆոյխտվանգերը շարադրում է քննադատաբար: Տյուվերենի և Իոհաննա Կրայնի հակադրութեան դեպքում ֆոյխտվանգերի համակրանքը վերջինիս կողմն է, որն զբաղվում է ոչ թե աշխարհի փրկսփայական մեկնաբանութեամբ, այլ փորձում է ազդել աշխարհի վրա, փոխել այն: Սակայն, Տյուվերենը ֆոյխտվանգերի համար թանգ է իր հումանիստական կոնցեպցիայի խորութեամբ:

«Հաջողութիւն»-ը քաղաքական խոշոր վեպ է: Կրյուգերի գործը վերածվում է հումանիզմի պայքարի՝ ֆաշիստական ռեակցիայի և վայրենութեան դեմ: «Հաջողութիւն»-ը հումանիզմի մանիֆեստն է՝ ուղղված ֆաշիստական ոճրագործութեան դեմ: Այդ հումանիստական պայքարը մարմնավորվել է գեղարվեստական խորը և բազմակողմանի կերպարներում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ռեակցիոն պերսոնաժները նկարագրված են ոչ կարիկատուրային, մինչև վերջ կարիկատուրային է միայն Ռուպերտ Կուցները, որի նախատիպը՝ Հիտլերը կյանքում նույնպես կարիկատուրային անձնավորութիւն է: Ֆոյխտվանգերը ցույց է տալիս, որ ռեակցիոն պերսոնաժների արարքները նրանց ամբողջ կյանքի և աշխարհայացքի անխուսափելի հետևանքն են:

Որը մարդկայնութեամբ հագեցված դրական պերսոնաժները նկարագրելիս՝ ֆոյխտվանգերը չի հանգում իդեալականացման, նա իր սիրած հերոսների մեջ տեսնում է սոցիալ-տիպական թերութիւններ: Վեպի լավագույն պերսոնաժներից մեկն Իոհաննա Կրայնն է, Մարտին Կրյուգերի ընկերուհին. այդ ազնիվ կնոջ մեջ մարմնավորված են բավարական ժողովրդի լավագույն գծերը: Կրյուգերի գործի համար մղած պայքարում նա աճում է բարոյապես և մտքով, աճում է որպես մարդ, սակայն նա չի դառնում հեղինակի վերացական իդեալների մարմնացումը, ընդհակառակը, այդ պայքարի ընթացքում հանդես են գալիս նաև նրա մարդկային թերութիւնները: Չնայած դրան, նրա մեջ անընդհատ աճում է կյանքի շարժիչ ուժը, արդարութեան ծարավը: Տյուվերենի հետ Իոհաննան հաղթանակով է դուրս գալիս արդարութեան համար ռեակցիայի դեմ մղած պայքարում:

«Օպպոզիցիաների ընտանիքը» վեպում ֆոյխտվանգերը նկարագրում է ֆաշիզմի հաղթանակը Գերմանիայում: Ֆաշիզմի հաղթանակը Գերմանիայում դառնում է Օպպոզիցիաների ընտանիքի ողբերգական անկման պատճառը,

բայց այդ ընտանեկան ողբերգությունը վերածվում է հումանիզմի ողբերգության՝ բարբարոսություն և խավարամոլության հաղթանակի պայմաններում: Փոյխտվանդերի հերոսների ողբերգականությունն այն է, որ նրանք դուրս են շարժվում այն երկրից, որտեղ ծնվել են, ապրել, օրգանապես յուրացրել նրա կուլտուրան, օժանդակել այդ կուլտուրայի զարգացմանը:

Ի՞նչպես տեղի ունեցավ այդ շրջադարձը, ի՞նչ պատճառներով վայրենություն և ստրկության ռասայական ցնորամիտ քաղաքացիական պատերազմի տանել մարդկային իսկական բանականության նկատմամբ: Ահա այն հարցերը, որոնք հուշում են Փոյխտվանդերին և նրա հերոսներին:

Օպպոնենայիների ընտանիքը տվել է հումանիզմի ոգով դաստիարակված գիտնականներ, վաճառականներ, տաղանդավոր երիտասարդություն: Նրանցից ամեն մեկն զբաղված է իր գործով և վայելում է միջավայրի սերն ու հարգանքը: Դասակարգային պայքարը, տարբեր պարտիաների պայքարը դուրս է մնացել նրանց ուշադրության ոլորտից:

Վեպի հիմնական պերսոնաժը Գուստավ Օպպոնենայն է, նա զբաղվում է գրականությամբ և արվեստով, աշխատում է Լեսսինգի գիտական կենսագրության վրա, սակայն նրա ապրուստի հիմնական աղբյուրը Օպպոնենայիների կահ-կարասիքի ֆիրմայի շահույթներն են: Գուստավի համար կյանքն ինչպես որ կա, գեղեցիկ է և հմայիչ, նա տրամադիր չէ որևէ բան փոխել: Մյուս եղբայրը՝ Էդգար Օպպոնենայն՝ հռչակավոր վիրավոր է, համաշխարհային գիտնական, որն ամբողջապես տարված է իր գիտական աշխատանքներով: Օպպոնենայիների ժառանգական ֆիրման գլխավորում է երրորդ եղբայրը՝ Մարտինը: Օպպոնենայիների համար միանգամայն անսպասելի է ֆաշիզմի հաղթանակը, նրանք չէին կարողանում հասկանալ, որ տղետ չիտլերը, որի գրքի վրա ծիծաղում էին որպես խելագար դառնացանքի, կարող է սպառնալիք դառնալ գերմանական ժողովրդի համար: Սակայն, նրանք տեսնում են, որ «Գերմանիան վերածվել է դժանոցի, որտեղ հիվանդներն իրենց ձեռքն են վերցրել հսկողների իշխանությունը: Աշխարհը տեսնում է արդյոք այս և ի՞նչ է նա ձեռնարկում»: Եվ ահա, նրանք ոչ միայն մարդկային պատմության այդ ամոթալի դեպքերի ականատեսներն են, այլև նրա առաջին զոհերը:

Փաշիստները խախտում են այդ խաղաղ ընտանիքի կյանքը, ընտանիքը ենթարկվում է ծանր հալածանքների, Մարտինը բանտարկվում է, իսկ պրոֆեսոր Էդգար Օպպոնենային, որպես հրեայի, հեռացնում են կլինիկայից: Գուստավը փախչում է արտասահման, սակայն, որոշ ժամանակից հետո վերադառնում է Գերմանիա՝ ֆաշիզմի ոճրագործությունները գրի առնելու և հրատարակելու համար. նա շուտով բանտարկվում և ուղարկվում է համակենտրոնացման ճամբար: Երկարատև տանջանքներից հետո Գուստավը ազատվում է ճամբարից, բայց քայքայված առողջությամբ: Ճամբարը դառնում է նրա գերեզմանը, Գուստավը վախճանվում է ազատվելուց երկու ամիս հետո: Գուստավ Օպպոնենայն ֆաշիզմի դեմ պայքարելուց չորս և քիչ քիչ չի կարող ապրել հայացող փրկսովայի խաղաղ կյանքով: Փոյխտվանդերը ցույց է տալիս, որ Գուստավի բոլոր արարքները պայմանավորված էին նրա հումանիստական հայացքներով, կուլտուրայի հաղթանակի նկատմամբ ունեցած անխախտ հավատով, բայց Գուստավի պայքարի մեթոդները կարող էին միայն այդ

արդյունքին հասնել: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ իսկական պայքարի համար անհրաժեշտ են պրոլետարիատի պայքարի մեթոդները: Գոլոտովի բարեկամ Կրաուս Ֆրիշլինն իր նամակում ասում է. «Մենք շարունակում ենք մեր աշխատանքը և գիտենք, թե ինչ պետք է անենք: Այդ «մենք»-ի տակ ես, ինչպես և ձեր հորեղբայրը նկատի ունենք գերմանական ժողովրդի շատ մեծ մասը: Ես նրան հավատացրի, որ մեզ չեն հաղթի»: Այսպիսին է վեպի վերջը, հեղինակի հավատը ֆաշիզմի անխուսափելի կործանման և գերմանական ժողովրդի ուժի նկատմամբ:

«Օպպոզիցիայի ընտանիքը» վեպը գերմանական վերջին հոլմանիստների վերջին օրերի տարեգրությունն է, ֆաշիստական ռեժիմին թշնամի գերմանական ժողովրդի ցասկոտ բողոքը:

«Արտաքսում» վեպում Ֆոյխտվանդերը նկարագրում է ֆաշիստական ռեժիմի հաղթանակից հետո Գերմանիայից արտաքսված և կամովին հեռացած հոլմանիստների կյանքը Փարիզում: Վեպի գլխավոր հերոսը կոմպոզիտոր Զեպպ Տրաուտվայնն է, ֆաշիզմի դեմ պայքարելու համար անհունորեն ծարավի մի ազնիվ արվեստագետ:

Ֆաշիստների կողմից ժուռնալիստ Բենիամինի բանդիտական առևանգման լուրը խորապես զայրացնում է խաղաղ երաժիշտին, նրան դարձնում մարտնչող ագիտատու: Տրաուտվայնը բուռն գործունեություն է ծավալում հակաֆաշիստական մամուլում՝ Բենիամինին ազատելու համար, նա հասնում է այն բանին, որ շվեյցարական կառավարությունը բողոքի նոտա է ուղղում գերմանական ֆաշիստական կառավարությանը՝ շվեյցարական աերոտորիայի վրա կատարած ավազակային արարքի համար: Ֆաշիստական կառավարությունն իր պատասխանի մեջ լկտիաբար հրաժարվում է այդ մեղադրանքից: Եվ այսպես, Տրաուտվայնի պայքարն անմիջական արդյունք չտվեց, ֆաշիստներն ամուր պահում են Բենիամինին, իսկ նրա գործը շարունակվում է չեզոք պետությունների ներկայացուցիչներից կազմված կոմիտեիայի քննության, որոնց վրա ազդում են գերմանական ֆաշիստները: Տրաուտվայնի կրքոտ հողվածները և կոչերն իրավունքի և բանականության մասին՝ որեւէ կերպ չեն ազդում ֆաշիստական բարբարոսության և անամոթության վրա: Տրաուտվայնը խիստ հուսահատված է, գուցե առաջին անգամ բուրժուական հոլմանիստի և երազողի աչքերի առաջ մթազնում է հավատն իդեաների ամենակարող ուժի նկատմամբ: Տրաուտվայնի լիբերալ քաղաքականության մեթոդները հայտաբերեցին իրենց հնացած լինելը և անպետքությունը: Նրա հողվածները բանականության և արդարության օրենքների խախտման դեմ, ինչպես բնութագրում է նրա բարեկամ գրող Հարրի Մայդելը, միայն «քաղաքականության խաղ է», իսկ ինքը՝ մի երազող: Տրաուտվայնին չհաջողվեց Բենիամինին ազատել: Այժմ արդեն Տրաուտվայնը հասկանում է, որ հոլմանիզմի և վեհ իդեալների ժամանակն անցել է:

«Արտաքսում» վեպում Ֆոյխտվանդերը բացահայտում է բուրժուական մորալի անխուսափելի հակասությունները: Այդ՝ վեպի հիմնական պրոբլեմներից մեկն է: Ֆոյխտվանդերը հանգում է այն եզրակացության, որ մորալի լիբերալ քաղաքական նորմերը հնացել են, որ նրանք իրենց տեղը պետք է զիջեն զինված ուժին:

Տրաուտվայնի աշխարհայացքի արմատական սխալները բացահայտում

է նրա որդին՝ Հանսը: Տաք վեճերի պահին Հանսը բացատրում է լիրերտ-
լիզմի անպտուղ լինելը, հոր անիմաստ վախն ամեն տեսակի բռնություն-
նկատմամբ: Հանսն ասում է. «Եթե գոյություն ունի արդարացի գործը
պաշտպանող մի ուժ, և եթե նրան միացնենք այն, ինչ դու համարում ես
հիմնական՝ մորալը և արվեստը, այդ ժամանակ քո հոգվածները կլինեն տա-
անգամ ավելի ուժեղ և մորալն իմաստ կունենա: Բռնության դեմ չի կարե-
լի կռվել պայմանագրություններ, այլ միայն բռնություններ: Ի դեպ՝ ես գտնում
եմ, որ բռնությունն այնքան էլ վատ բան չէ: Վատ է դառնում միայն
այն ժամանակ, երբ այն օգտագործվում է վատ նպատակների համար:
Մենք ձգտում ենք այն բանին, որ արդարացի գործի կողմը լինի ոչ միայն
օրինավոր մարդկանց համակրանքը, այլև տանկեր»: Հանսը հակադրվում է
բանականության և արդարության վերացական ըմբռնումներին. «Նրա-
մեջ աճում է սրբազան ատելություն ֆաշիստական բռնակալության դեմ».
Նրա քաղաքական համակրանքը միանգամայն պարզ է. Հանսը ցանկանում
է զնալ Սովետական երկիրը, որ «150 միլիոն մարդիկ նոր աշխարհ են կա-
ռուցում»: Հանսը գիտակցում է, որ սովետական մարդկանց երջանկության
և ուժի աղբյուրը սոցիալիզմն է: Այդ հնարավորություն է տալիս նրան
բարձրանալու «հայրերի» անօգնական իդեալիստական աշխարհըմբռնումից:
Հանսը երջանիկ է զգում իրեն, որ գտել է կյանքի ճիշտ ուղին, երջանիկ
է, որ «աշխտում կա այդպիսի ճշմարտություն և մարդիկ, որոնք ապրում
են այդ ճշմարտություններ»:

Վեպի կենտրոնական հերոսը, այնուհանդերձ, Տրաուտվայնն է. մենք
խորապես զգում ենք նրան իր ամբողջ էությունում: Հեղինակը հանգամանո-
րեն նկարագրում է նրա ինտելեկտուալ կառուցվածքի բոլոր նրբություն-
ները: Տրաուտվայնի աշխարհայացքի անկումը երկարատև և տանջող պրո-
ցես է, նա «Հաղորդություն» և «Օպպոզիցիաների ընտանիքը» վեպերում ար-
տահայտված բուրժուական հումանիզմի հատուկ գծերի հետագա շարունա-
կությունն է և անկումը: Բուրժուական հումանիզմին փոխարինում է նոր,
ավելի արգասավոր հումանիզմ՝ ստեղծված ամբողջ աշխարհի աշխատավոր-
ների միասնության ուժի վրա: Ծեր կազմարար Մերկեն՝ նախկին
սոցիալ-դեմոկրատ, իսկ այժմ պրոլետարական հակաֆաշիստական ֆրոնտի
բուռն կողմնակից, Հանսին թելադրում է այն միտքը, որ անհրաժեշտ է ա-
վելի խորացնել Տրաուտվայնի սկսած էվոլյուցիան, ֆաշիզմի այդ թշնա-
մուն դարձնել սոցիալիզմի բարեկամ:

«Արտաքսում» վեպում նկարագրված են մի շարք ֆաշիստական դու-
ծիչներ, ինչպես՝ դիվանագետ Շպիցգին, Փարիզում հատուկ լիազոր Հայդե-
բերգը, ֆաշիստական ժուռնալիստ Վեգեները և այլն: Այդ մարդիկ վեպում
սխեմատիկ չեն նկարագրված և նրանց կերպարների ամբողջական նկարա-
գրությունն ավելի որոշակի է դարձնում նրանց ոճագործ արարքները:
Շպիցգիի մասին ֆոյխտվանգերն ասում է. «Նրա գոյությունը հիմնված է
դիակներից գոյացած ֆունդամենտի վրա, նա, կարելի է ասել, նստած է
դիակների վրա: Իսկական դահճի բոլոր հատկություններով օժտված է Հի-
թլերի հատուկ ներկայացուցիչը Փարիզում: Հայդեբերգը, որի ողջ կարիերան
նույնպես հիմնված է սպանությունների և արյունահեղությունների վրա:
Ֆոյխտվանգերը ցույց է տալիս հակաֆաշիստական էմիգրացիայի պայ-
քարը ֆաշիստական այդ դահճիների դեմ: Ֆոյխտվանգերը հանգում է այն

եզրակացության, որ այդպիսի վտանգավոր թշնամիներին ոչնչացնելու համար պետք է ստեղծել ժողովրդական ճակատ, ավելի ու ավելի գործնական դարձնել ֆաշիզմի դեմ ուղղված պայքարը:

«Արտաքսում» վեպը դեռևս անավարտ է. վեպի երրորդ և վերջին մասում հեղինակը հավանորեն կնկարագրի հակաֆաշիստական ժողովրդական միասնական ճակատի պայքարը ֆաշիստ ճիմադներին դեմ:

Իր վերջին հոդվածներից մեկում Ֆոյխտվանգերը գրում է. «Իմ դրամատիկական, ինչպես և էպիկական ստեղծագործությունների իդեական խորացման վրա մեծ ազդեցություն է ունեցել սոցիալիստական հասարակության գոյությունը: Այգ պրոցեսը որոշակիորեն նկատվում է Ֆոյխտվանգերի ամեն մի ստեղծագործության մեջ: Ֆոյխտվանգերը հեռանում է բուրժուական հումանիզմի դիրքերից, այժմ նա տեսնում է, որ «իսկական հումանիզմը հանդիսանում է սոցիալիզմի իմաստը, նրա արդյունքը, որ Արևմուտքի ինտելիգենցիայի ավելի մեծ շերտերն աղքատվում են նետում իդեալիստական հին թեորիաները, այն փոխարինում Լենինի սուր և պարզ ռեալիստական հումանիզմով» (Ֆոյխտվանգեր—«Լենինը և սոցիալիստական հումանիզմը»):

Ֆոյխտվանգերը Սովետական հայրենիքի մեծ բարեկամն է, նա Արևմուտքի առաջին գրողներից մեկն էր, որ իր ցասումն արտահայտեց ֆաշիստական Գերմանիայի կողմից մեր հզոր հայրենիքի վրա կատարված ավազակային հարձակման հանդեպ: Նա ասում է. «Մենք զայրացած ենք ֆաշիստների կողմից սովետական ժողովրդի վրա կատարված հարձակումից: Մենք գիտենք, որ այդ հարձակման խելացնորությունն ավելի մեծ է, քան նրա նենգությունը: Խելագար ֆաշիստներն այժմ կռվի են հրավիրել այնպիսի հակառակորդների, որոնք նրանցից գերազանցում են իրենց թվով, համոզմունքներով և իրենց միասնությամբ: Այժմ ֆաշիստներին վերջ կտրվի... Պարզ է, որ այս պատերազմը կատաղի կլինի և ծանր հետևանքներ կունենա: Բայց մենք, որ ճանաչում ենք սովետական ժողովրդին, համոզված ենք, որ ուժեղ, իմաստուն առաջնորդի ղեկավարությամբ և անգլոսաքսոնական երկու մեծ ժողովուրդների հետ դաշինք կնքած, սովետական ժողովուրդն առմիշտ անփնաս կդարձնի նացիոնալ-սոցիալիստներին»:

Н. М. Токарский

О местонахождении Даран-дашта

Осенью 1934 г. во время работ по съемке плана древнего Двина нами был обследован утес, находящийся примерно в 3-х км к северу от центрального двинского холма и известный у местных жителей под названием „Кыз-кала“. Среди черепков древней посуды, усеивающих его склоны, Кс. Н. Токарской было найдено несколько кусочков облицовочных изразцов двух видов: росписных и покрытых гладкой голубой поливой. О форме первых по найденным фрагментам трудно что-либо сказать; что касается голубых, то здесь можно высказать некоторые предположения, так как у некоторых из них сохранились сходящиеся под острым углом края. Найденные обломки хранятся в Ленинграде в Государственном Эрмитаже, и нам приходится на прилагаемом рисунке по памяти воспроизвести форму одного из них (рис. 1). Не подлежит сомнению, что он имел острый конец, показанный на рисунке пунктиром; остается только решить, как выглядела в свое время вся плитка.

Классические персидские изразцовые облицовки XIII в. составлялись из плиток, имевших форму звезды и креста (рис. 2), украшенных росписью или покрытых только красочной глазурью без всякого рисунка. В Ханаке (Азербайджан) в мавзолее Пир-Хусейна росписные звезды сочетались с гладкими голубыми крестами¹; несмотря на то, что найденный нами обломок по поливе близок к голубым плиткам из Ханаки, — предположить, что он является обломанным концом изразца, имевшего крестообразную форму, нельзя, так как края сходятся в нем не под прямым, а под острым углом, исключающим возможность помещения такой плитки между восьмиконечными звездами.

В очерке об изразцах И. А. Орбели² устанавливает, что облицовки стен кирпичных зданий из фигурных изразцов создались под влиянием наборов из резных камней (обычно двух цветов), украшающих порталы и входы армянских построек XII—XIII вв; поэтому при определении первоначальной формы голубых изразцов, найденных в


¹ Крачковская В. А. — Изразцы мавзолея Пир-Хусейна. Международный Конгресс по иранскому искусству и археологии. Доклады. Ленинград. Сентябрь, 1935 стр. 109 и сл. Тбл. XLIX.

² Орбели И. А. — Мусульманские изразцы. Петербург. 1923, стр. 17 и сл.


Двине, будет вполне уместно обратиться к наиболее распространенным в Армении видам облицовок из фигурных резных камней. На порталах анийских зданий можно было видеть восьмиконечные звезды (дворец парона—рис. 2), шестиконечные—(гостиница, дом Саркиса—рис. 3; дворец парона—рис. 4) и, наконец, пятиконечные (гостиница—рис. 5)¹. Ни в одной из фигур, составляющих эти декоративные наборы, края не сходятся под таким углом, какой имеется в двинской плитке; поэ-




1




2




3




4



5



6



7

тому приходится отказаться от мысли о звездчатой изразцовой декорровке. По величине своего угла двинские голубые плитки совсем близко подходят к элементам геометрического узора, вырезанного в камне, над западными входами в притворах Ованна-ванка и Сагмоса-

¹ МАРР Н. Я.—Апн. Книжная история города и раскопки на месте городища. Ленинград—Москва. 1931. Тбл. XLVII—297, 208, XXXVI—147, XXIX—99.

Армянские мастера охотно украшали композициями из пятиконечных звезд и люнеты над входами монастырских зданий (Арич, Дсех и др.). Там, где узор не набирался из отдельных камней разных цветов, а вырезался в целой плите, как напр. в Сагмоса-ванке,—звезды обычно имели более высокий рельеф для получения игры света и тени (рис. 6).

ванка (рис. 7)¹, построенных в XIII в. (Армения, Аштаракский район), причем они могли иметь форму как ромба, так и остроугольного „креста“ и применяться в сочетании с росписными.

Нет оснований думать, что обломки плиток попали на Кыз-калу откуда-нибудь извне; вернее будет полагать, что здесь в XIII в. была возведена кирпичная постройка с облицовкой из голубых и росписных изразцов, возможно имитировавшей рельефные узоры притворов Ованна-ванка и Сагмоса-ванка; остатки этой постройки могли сохраниться под земляным покровом, лежащим сейчас на утесе.

Наличие в Двине здания с нарядной изразцовой облицовкой не представляет ничего необычного, так как раскопки 1937—1939 гг. показали, что в XIII в. город продолжал жить и в нем возводились постройки, в которых мастера широко применяли разнообразные декоративные приемы своего времени. Здесь были найдены фрагменты облицовки из кирпичиков, составлявших геометрический узор с заполнением фона белым раствором, сходной, несмотря на некоторую грубоватость работы, с облицовкой мавзолея Муминэ-хатун (конец XII в.) в Нахичевани. Отлитые из гипса пояса обрамляли нишу в расчищенном при раскопках 1938 г. жилом доме на северном склоне главного двинского холма. Звериный гон на фоне из растительных побегов—излюбленный сюжет мастеров XIII в.—украшает один из поясов, позволяя безошибочно установить время возведения этой постройки².

Так как дорогое изразцовое убранство могло быть применено только в монументальном сооружении, естественно явилась мысль связать находки на Кыз-кале с свидетельствами современных армянских авторов о строительстве Хулагу-хана в Армении, тем более, что Эмин, Броссе и Бакрадзе считали, что Хулагу-хан строил свой дворец на Гарнийской равнине, у начала которой, при выходе р. Азата (Гарни-чая) из гор, высится и Кыз-кала.

Эмин в примеч. 737 к переводу Всеобщей Истории Вардана (Москва, 1861 г., стр. 181—182) приводит выдержку из Истории Киракоса Гандзакского. „В это время великий Хулаву начал строить обширный город на равнине Гарни (в округе Гехаркуни Сюникской провинции Великой Армении); для этого он обязал покоренный народ доставлять лес отовсюду для постройки домов и дворцов в новом городе, который он строил „для летнего своего местопребывания“, и

¹ Измайлова Т. А.—Архитектурные фрагменты из Анберда. Труды Отдела Востока Госуд. Эрмитажа. Ленинград. 1939. Т. I, тбл. IV, 2.

В Госуд. Историческом музее в Ереване имеется найденная в Двине глиняная облицовочная плита, на котором до обжига был вырезан такой же рельефный узор.

² Только совершенно игнорируя эти материалы, автор историко-географического очерка о Двине, составленного в связи с раскопками и опубликованного после нескольких лет археологических работ, мог выселить из Двина последних его жителей в 30-х годах XIII в. (Ас. Шахназарян. Двин. Историко-географический очерк. Ереван. 1940, стр. 135).

замечает „что под Дарин-дашт, или Даран-дашт — *Դարին կամ Դարան զաշտ* — следует разуметь не Муханскую равнину, *զաշտն Մուղան* — но, вероятнее Гарнийскую равнину, где некогда возвышался летний дворец царя Тердата Аршакида, что подтверждается словами того же Малахии, который определяет Даринскую равнину, называя ее „местом, где некогда была летняя резиденция армянских царей, т. е. Аршакидов“.

Броссе¹ говорит о Гарни: „C'est également dans la plaine de Garhni, nommée Alatagh par les Mongols, qu' Houlagou se construisit un superbe palais“.

Бакрадзе² при описании гарнийской церкви отмечает: „Гарни известен и тем, что на равнине его, называемой Алатаг, или Дарин-дашт, служившей летнею резиденциею армянских царей из Аршакуниан, в XIII ст. Гулагу-ханом на свое иждивение воздвигнут был роскошный дворец“.

Просмотр свидетельств армянских авторов XIII в. об этой постройке Хулагу-хана однако показывает, что ни у одного из них, кроме Киракоса, местность не носит названия Гарни, а именуется Дарин-дашт или Даран-дашт; видимо в тексте Киракоса позднейшим переписчиком была допущена описка (вместо *Դարինոյ—Դարանոյ*)³, которую и устранил в своем переводе К. П. Патканов. Вардан во Всеобщей Истории⁴ отмечает, что он не дерзнул распространяться о событиях, происшедших между 1236 и 1265 гг., так как они во всех подробностях были описаны его учителем Иоанном Ванаканом и другом Киракосом вардапетом. Значит, с трудом последнего Вардан был хорошо знаком и едва ли мимо его внимания могло пройти расхождение в наименовании места, где Хулагу-хан вел свое строительство; в подлинном тексте Киракоса этого расхождения, надо полагать, не было так же, как нет его в сочинениях Вардана, Магакии и Степаноса Орбелиана.

Совокупность отдельных деталей, которые можно найти у этих историков, позволяет, по нашему мнению, установить местоположение Даран-дашта.

Вот что они сообщают:

¹ M. Brosset—Histoire de la Sioumie par Stéphanos Orbélian. Saint-Petersbourg. 2 livr. 1866, стр. 131.

² Бакрадзе Дм.—Кавказ в древних памятниках христианства. Записки О-ва любителей кавказской археологии. Кн. I. Тифлис. 1875, стр. 50.

³ Կիրակոս Դարան Էրեզ—Պատմութիւն Հայոց. Մոսկւա, 1858 թ., էջ 238:

⁴ Վարդան Քրդրաբէթ—Պատմութիւն Երկրակաշի. Մոսկւա, 1861 թ., էջ 192:

Вардан—Всеобщая история, стр. 179 и сл.

Труды Иоанна Ванакана, известного своей ученостью, у которого получили образование Вардан, Киракос и Магакия, до нас не дошли; сохранилась лишь его собственноручная запись о выкупе евангелия, плененного монголами. См. С. В. Тер-Аветисян.—Автограф Иоанна (Ованнеса) Ванакана Таушского, армянского писателя монгольской эпохи. Изв. Кавказского Историко-Археологического Института. Т. IV. Тифлис. 1926, стр. 51—54.

Вардан¹. „Отсюда Хулаву возвратился на зимние квартиры на Муханскую равнину и на летние стоянки в Даринский округ, или, как другие называют, в Даранскую равнину: здесь вокруг гор находится много каменистых пещер: эту местность он полюбил и обстроил ее зданиями по своему желанию. Он даже думал выстроить здесь город, почему и вся окрестная страна пострадала от этого, ибо и люди и скоты должны были из дальних мест доставлять тяжелые бревна“.

Магакия². „... и видя себя обладателем великих сокровищ, Гулаву-хан приказал себе построить дворец на поле Дарин, называемом татарами Алатаг, на том месте, где было летнее местопребывание великих царей армянских, из династии Аршакидов.

Киракос³. „В те дни Гулаву стал строить обширный и многолюдный город на равнине Дарин. Он предписал всем своим подданным поставлять строевой лес для постройки домов и дворцов нового города, который он строил на месте своего летнего пребывания. Жестокие и суровые надсмотрщики привели в изнеможение не только людей, но и скот: сотни быков едва могли сдвинуть с места одно бревно, так они были велики и толсты. Не менее затрудняла их дальность пути через горы и реки“.

Степанос Орбелиан⁴. „Сембат пользовался большим почетом и уважением со стороны Гулаву-хана, который часто поручал ему ведение своих дел. ... По повелению Гулаву он отправился в Басен за сосновым лесом для постройки дворца в Даран-даште, который татары называют Ала-даг“.

Суммируя эти весьма скудные данные, можно установить следующее: во второй половине XIII в. в местности, называемой армянскими историками то Дарин-дашт, то Даран-дашт, а монголами Алатаг (Ала-даг), где некогда имели летнее местопребывание армянские цари из династии Аршакидов, Хулагу-хан, зимовавший в Муганской степи, начал строить летнюю резиденцию (дворец) и город. Строевой лес поставлялся сюда с большими трудностями через горы и реки из Басена, куда за ним был отправлен Сембат Орбелиан. Никакого описания местности

¹ Там же, стр. 198—199.

Всеобщая история, стр. 185.

² Մաղակիայ Արեղայ—Պատմութիւն իման ազգի Նեադար. Ս. Պետերբուրգ 1870 թ., էջ 31—32:

История монголов инока Магакия, XIII века. Перев. и объясн. К. П. Патканова. Санкт-Петербург, 1871, стр. 34.

³ Կիրակոս Դանիէլեցի—Պատմութիւն Հայոց. Ստեփան, 1858 թ., էջ 238:

История монголов по армянским источникам. Вып. второй, заключ. в себе извлечения из истории Киракоса Гандзакци. Перев. и объясн. К. П. Патканова. Санкт-Петербург, 1874, стр. 106.

⁴ Ստեփանն Օրբելիան—Պատմութիւն նահանգի Սիսական. Թիֆլիս, 1911 թ., էջ 415:

История монголов по армянским источникам. Вып. первый, заключ. в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Констабля Сембата. Перев. и объясн. К. П. Патканова. С.—Петербург, 1873, стр. 43 и сл.

древние авторы не дают, и только Вардан считает нужным упомянуть о том, что в окрестных горах было много пещер.

Предположение, что Даран-дашт находился в районе Гарни, как основанное на недоразумении, отпадает, тем более, что равнина, по которой в своем нижнем течении проходит река Азат (Гарни-чай), с ее жарким летом едва ли могла быть избрана для летнего пребывания.

Нельзя также смешивать, как правильно отмечают Эми (ук. прим. 737) и Манандян¹, Муганскую и Даранскую равнины, в особенности, если принять во внимание, что Вардан четко разграничивает их как зимнюю и летнюю стоянки монголов. Я. А. Манандян (там же), не определяя точно места, где находился новый город, правильно указывает, что под Алатагом нужно разуместь горный хребет к югу от Багавана и Диадина в Багреванде. Алатаг (Ала-даг), древн. Цалке, на восток тянется до Цалке-отна, граничившего с областью Коговит, и поэтому вполне возможно, что новая резиденция, находившаяся, по нашему мнению, в Коговите, могла у монголов носить то же название Алатаг. Несмотря на скудость имеющихся сведений, все же можно Даран-дашт отождествить, и не только по названию, с районом древнего Даруйнка (ныне Баязида)². Коговит принадлежал Аршакидам, и в неприступном Даруйнке хранились царские сокровища³; сюда за Масис, в свою любимую область Коговит приезжали они на охоту⁴. Даруйнк не потерял своего значения и после падения Аршакидов. В VII в. эта крепость известна уже как резиденция Багратидов⁵, в которой, по свидетельству Себеоса⁶, находилась их фамильная усыпальница. И поэтому, когда Магакия, говоря о Дарин-даште, упоминает об аршакидской резиденции, он, надо полагать, имеет в виду древний Даруйнк. Около Баязида в горах действительно имеются пещеры⁷, что соответствует описанию Вардана, и по мнению И. А. Орбели, видевшего их, подтверждает

¹ Манандян Я. А.—О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Эривань. 1930, стр. 207.

² У Марра—Даруйнк, Адонца—Даронк, Даройнк, Патканьяна—Дарьюнк, Даронк, Даруйнк. (Древние авторы: Фауст Византийский—Դարօնք, Себеос—Դարինք, Мхитар Айриванкский—Դարօնք);

³ Փառաքանիքի Բիւզանդացի—Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832 թ., էջ 187; Адонц Н.—Армения в эпоху Юстиниана. Тексты и разыскания по армяно-грузинской филологии. Кн. XI. С.—Петербург. 1908, стр. 307.

⁴ Մովսէս Խորենացի—Պատմութիւն Հայոց. Տիփլիս, 1913 թ., էջ 283;

История Армении Моисея Хоренского. Пер. Н. О. Эмина. Москва. 1893, стр. 160.

⁵ Марр Н. Я. Ук. соч., стр. 21.

⁶ Սեբեոս Եւրպանի—Պատմութիւն Ի Հերակլէ. 1879 թ., II.—Պետերբուրգ, էջ 68, 116;

История императора Иракла епископа Себеоса, писателя VII в. Пер. с арм. К. Патканьяна. С.—Петербург. 1862, стр. 76 и 129.

⁷ Ивановский А. А.—По Закавказью. Мат. по археол. Кавказа. Вып. VI. Москва. 1911, стр. 63 и сл.

C. F. Lehmann-Haupt—Armenien Einst und Jetzt. Berlin und Leipzig. 1931 В. II, стр. 735 и сл.

